

26(383)
10.09.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

«Լուսարար»-15

ՄՏՔԻ ԵՎ ՀՈԳՈՒ ԼՈՒՅՍԻ ԱՐԱՐՈՒՄՈՎ

Որևէ բան շեշտելիս մենք հաճախ ապավինում ենք թվերին: Թվերը հուշում են: Թվերը պարտադրում են: Կամ էլ, գուցե, մեղմ ասենք, պարզապես հորդորում են: Ինչպես էլ որակենք, սակայն, թվերը իմպերատիվություն չունեն, որովհետև թվային ազդեցությունը ժամանակավոր ու փոփոխական է:

Այս առումով, թվում է, ոչինչ չի հատկանշում այն փաստը, որ «Լուսարար»-ը 15 տարեկան է դարձել: Թերթի ամեն մի համարի ծնունդ ուրախության ու տառապանքի համակցություն է, որ բառերով չես բացատրի: «Լուսարարի» յուրահատկությունն է, որ հազարավոր ընթերցողների հետ խմբագրական փոքրիկ կոլեկտիվը միասնական ամբողջություն է կազմում, այսինքն՝ միասին ենք տքնում նյութը գրելիս, խմբագրելիս, սրբագրելիս, էջադրելիս... Եվ տպարանահոտը դեռ վրան՝ միասին էլ հրճվում ենք, որ վերջապես լույս տեսավ թերթը: Հերթականը:

Քիչ բան է երևի հարկավոր իրական երջանկության համար: Եթե կարող ես ամեն անգամ հերթական համարը տպարանից ստանալիս մի մեծ ծանրություն մտնել քո ուսերից, ուրեմն դա երջանկություն է: Ի՞նչ փույթ, թե շատերն անհաղորդ են այն անչափելի լարվածությանը, որ հոգեպես ու ֆիզիկապես կրում են թերթը լույս ընծայելիս: Դու՛րս էլ փոքրաթիվ խմբագրակազմը: Եականը ընթերցողի գոհունակությունն է, որ զգում ես ամեն անգամ նրա հետ հանդիպելիս և մանավանդ, նրա գրավոր հղումներում:

Շնորհակալ ենք, ԸՆԹԵՐՑՈՂ, որ մեկուկես տասնամյակ հավատարմորեն մեզ հետ ես: Հաճախ նույնիսկ դեմքով իրար չգիտենք, բայց, միևնույն է, մենք իրար բարեկամ ենք, քանզի իսկական բարեկամությունն է, որ դիմանում է ժամանակի փորձությանը: Այս մեկուկես տասնամյակում իրարից շատ բան սովորեցինք, շատ բան փոխանցեցինք միմյանց, ասել է թե՛ «Լուսարարի» ծալաբաժանված բազմահատոր արխիվը նաև քո՛ միջոցով է ստեղծվել:

Հաճելի է, երբ անհրաժեշտ պահին կողքից գործնական աջակցություն ես տեսնում: Այս առումով, հարկ է շեշտել, որ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը «Լուսարար»-ի հիմնադրման օրվանից մշտապես եղել է խմբագրակազմի կողքին, սատարել ամեն հարցում: Այսպիսի համագործակցությունը մի հուսալի երաշխիք ունի՝ «Լուսարար»-ը դեռ երկար ճամփա ունի գնալու:

Եվ, անկասկած, այդ ճամփան շարունակելու է գնալ քեզ հետ, ԸՆԹԵՐՑՈՂ: Թվերը գումարվելու են, ձևավորվելու են հոբելյաններ, և ամեն անգամ դարձյալ ընդգծվելու է թերթի կարևոր առաքելությունը: Արհեստավարժությունը, պատասխանատվությունը, անաչառությունը հատկանիշներ են, որոնք էական են լրատվամիջոցի աշխատանքը գնահատելիս: Բայց մենք ոչ թե գնահատանք, այլ ակնկալում ենք, որ մտքի ու հոգու լույսի արարումն Արցախում ավելանա նաև «Լուսարար»-ի միջոցով: Հենց դա ենք համարում մեր գլխավոր առաքելությունը:

Սվետլանա ԽԱԶՍՐՅԱՆ

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԱԿԱ ԱՄՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ

Շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա և Գիտելիքի օրվա կապակցությամբ: Հայ ժողովրդի համար դպրությունը միշտ էլ ապագայի ուղենիշ է եղել՝ լուսավորելով սերունդների հարատև ճամփան: Դժվար է պատկերացնել երկրի հետագա զարգացումն առանց գիտելիքի ու դպրության, այդ պատճառով էլ մեր պետությունը առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում կրթությանը: Բարեփոխումների այն ծրագրերը, որոնք տարեցտարի թարմացվում ու շարունակական լուծում են ստանում, նպատակ ունեն Արցախում ստեղծել ուսման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ և, անկասկած, կրթությունը դնել որակական նոր աստիճանի վրա: Մենք հավատում ենք հանրապետությունում առկա մանկավարժական ներուժին՝ անշուշտ հիմքում ունենալով բնագավառում ձեռք բերված այսօրվա հաջողությունները:

Ուզում եմ հատկապես շնորհավորել նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դնում դպրոց, արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ: Նման շրջադարձերը մարդու կյանքում մեծ նշանակություն են ունենում՝ նպաստելով գիտելիքի միջոցով աշխարհի բացահայտմանը, ինչը նաև անհատի հետագա զարգացման գրավակամն է:

Սիրելի՛ բարեկամներ
Նոր ուսումնական մեկնարկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հերթական տարեդարձի նշումով, ինչը յուրահատուկ խորհուրդ ունի: Անկախությունը մեր ժողովրդի ամենաթանկ նվաճումն է, որ ձեռք է բերվել հայ ժողովրդի համախուժ պայքարով, ուստի բոլորս պարտավոր ենք այն պահպանել ու պաշտպանել: Վաղվա համար արժանի քաղաքացի կրթելով և դաստիարակելով՝ մենք ամրապնդում ենք այդ նվաճումները: Այս շեշտումով ու Արցախի Հանրապետության հռչակման տոնի առթիվ ևս ջերմ շնորհավորանքներ հղելով՝ մաղթում եմ բոլորիդ խաղաղ երկինք և ստեղծագործ առօրյա: Թող հաջողություններն ուղեկցեն ձեր հետագա բոլոր նախաձեռնություններում:

Ս. ԱՄՐՅԱՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարար



Հանրապետության 219 հանրակրթական ուսումնական հաստատությունները սեպտեմբերի 1-ին իրենց դռները բացեցին ավելի քան 21 հազար դպրոցականների առջև: Առաջին զանգի խորհուրդը առանձնահատուկ նշանակություն ունի Ստեփանակերտի հ.1 և հ.6 հիմնական, Մարտակերտի շրջանի Չափարի, Ասկերանի շրջանի Աստղաշենի, Քաշաթաղի շրջանի Արտաշավի միջնակարգ դպրոցներում, որոնք նոր ուսումնականը սկսել են նորակառույց դպրոցաշենքերում:



ԶԱՓԱՐՈՒՄ ՏՈՆԵՑԻՆ ԳՊՐՈՅԱՄՈՒՅԸ

Մարտակերտի շրջանի Չափար գյուղը, որը շրջանի բախտակից բնակավայրերի պես ճաշակել է թշնամու պատճառած ավերածությունների, բռնագաղթի դառը ճակատագիրը, ոչ միայն շտկում է մեջքը, այլև բացել է թևերը՝ լայնահուն թռիչքների պատրաստ: Նման կարծիք կիսայանի յուրաքանչյուր ոք, ով ակնատեսն է ազատագրումից հետո անցած 21 տարիների ընթացքում գյուղի աստիճանական վերակերտումին: Գյուղի կենտրոնում՝ բարձունքի վրա, բազմած նորակառույց դպրոցաշենքը ամբողջացնելու է եկել վերջին տարիների կառուցված հուշահամալիրի և հանդիսությունների տան, գյուղապետարանի ու



The Office of the NKR President

բուժկետի, մանկապարտեզի ու մշակույթի տան՝ ծառափիտ անտառներով պարուրված չքնաղ համայնապատկերը: Գյուղ բերող բարեկարգ ճանապարհը, կենտրոն տանող ասֆալտապատ ուղի, փողոցները՝ եզերված գիշերային լուսավորվածության էլեկտրասյուներով, ցայտաղբյուրը և էլի շատ իրողություններ խոսում են բնակավայրի քաղաքատիպ հարմարությունների մասին: Այս ամենը կապվում է մի անվան՝ Վարուժան Գրիգորյանի հետ. այս գյուղի հարազատ գավակ, նրա ցավով ու հոգսերով ապրող անձնավորություն, որն իր կարողություններն ի



սպաս է դնում հարազատ բնօրրանի բարգավաճմանը:

2014թ. սեպտեմբերի 1-ը պատմական կղանջն էր համար: Նա հյուրընկալել էր հայկական երկու հանրապետությունների նախագահներին, Հայաստանի ու Արցախի բարձրաստիճան պաշտոնյաների, ակադեմիկոսների, հանրորեն ճանաչված շատ անձանց, ովքեր եկել էին կիսելու Չափար գյուղի բնակչության ու նրա արժանավոր գավակի՝ բարերար Վարուժան Գրիգորյանի ուրախությունը՝ կապված նոր դպրոցի բացման հետ:

Պատվավոր հյուրերին աղուհացով դիմավորում են երեխաները: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, հանդիսության բոլոր մասնակիցները իրենց քայլերը նախ ուղղում են դեպի հուշահամալիր՝ գլուխ խոնարհելու Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան գոյամարտում նահատակված չափարցիների հիշատակին կառուցված հուշարձաններին:

Դպրոցի ընդարձակ բակի երկու կողմերում կանգնած դպրոցականները հյուրերին ողջունում են ՀՀ և ԼՂՀ դրոշմներով: Հանդիսավոր հավաքը՝ նվիրված Չափարի Ա. Սաղյանի անվան միջնակարգ դպրոցի նորամուտին, բացում է գյուղապետ Վարդգես Սաղյանը:

ԸՆԹԱՅ

ԴՊՐՈՑ, ՈՐԻՆ ԵՐԿԱՐ ԵՆ ՍՊԱՍԵԼ ԱՍՏՈՂԱՅԵՆՈՒՄ

Գիտելիքի օրվան ընդառաջ մեծ նվեր ստացավ Ասկերանի շրջանի Աստղաշենի համայնքը: Շահագործման հանձնվեց 120 տեղանոց, ժամանակակից պայմաններին համահունչ դպրոցական նոր շենքը: Օգոստոսի 31-ին այստեղ մեծ հանդիսություն էր: Դպրոցամուտը շնորհավորելու էին եկել պետական այրեր, ծնունդով աստղաշենցիներ, գյուղի հասարակությունը, հարևան համայնքներից ներկայացուցիչներ: Եկել էին կիսելու աստղաշենցիների ուրախությունը, որոնք տարիներ շարունակ երազում էին այս օրը:



Համայնքի ղեկավար Արթուր Գրիգորյանն ու դպրոցի տնօրեն Սլավա Գրիգորյանը հանդիսավոր հավաքի ժամանակ խոստովանեցին, որ գյուղի հասարակությունը երկար է սպասել դրան: Կեսդարյա պատմություն ունեցող դպրոցական շենքի կողքին հառնել է մի հողակերտ կառույց, որտեղ պետք է կրթվեն ու դաստիարակվեն իրենց հաջորդ սերունդները: Այն նոր էջ կբացի Աստղաշեն գյուղի տարեգրության մեջ: Տնօրենը երախտի խոսք ասաց հանրապետության ղեկավարներին, որոնք դպրոցաշինության, մատաղ սերնդի ապագայի դրսևորման ռազմավարական ծրագրի իրականացման շրջանակներում ներառել են նաև Աստղաշենի նոր դպրոցական շենքի կառուցումը և վստահեցրեց, որ նոր դպրոցը՝ հին ավանդույթներին հավատարիմ, կթողարկի մեր պետությանն ու հայրենիքին արժանի զավակներ:

հաջորդ քայլերը պետք է արվեն գյուղի բնակչության բարեկեցության, մարդկանց կյանքի որակի ապահովման ուղղությամբ: Նրա համոզմամբ, Աստղաշենում նոր դպրոցի կառուցումը պիտի լինի այն հիմնալի ավանդույթների շարունակությունը, որ անգամ վատ պայմաններում այդ հողը սերել է այնպիսի մարդկանց, որոնք հետագայում

ընդգծեց, որ այս դպրոցում են կրթություն ստացել իրենց տոհմի բոլոր անդամները: Իսկ հայրը՝ Սերգեյ Անդրյանը, եղել է նրա հիմնադիրներից և երկարամյա տնօրենը: Նրա խոսքերը ավագ եղբոր հասցեին ոչ այնքան քրոջական խանդավառության արտահայտություն էին, որքան իսկական հայրենասերի, խոսքով, գրչով հայրենիքի զինվորային օրինակով նրան ամենացորդ նվիրվելու, մատաղ սերնդին դաստիարակելու հորդոր:

Դպրոցի տնօրենը նշեց, որ պետական հոգածության հետ մեկտեղ՝ Աստղաշենի համայնքի, առանձնապես դպրոցական կյանքի նորմալ գործունեության համար հետևողական բարեգործական աշխատանքներ են իրականացնում համագյուղացիներ հայր և որդի Վիլիելմ և Կարեն Կարապետյանները, Արմեն Ղահրամանյանը և ուրիշներ, որոնք մշտապես կապի մեջ են հայրենի գյուղի հետ և ապրում են նրա հոգսերով: Վ. Կարապետյանը դպրոցի բացման էլ ձեռնունայն չէր եկել, իր հետ բերել էր սարքավորումներ ու պարագաներ, որոնք նվիրեց հարազատ դպրոցին:

կարևոր ու բախտորոշ դերակատարություն են ունեցել մեր երկրի տարեգրության մեջ: Աժ նախագահը շնորհավորեց նաև մեր ամենակարևոր տոհմի՝ ԼՂՀ հռչակման հերթական տարեդարձի կապակցությամբ՝ շեշտելով, որ 23 տարի հետո էլ պետականաշինության այն կարևոր ուղղությունները, որոնք վերաբերում են նոր սերնդի դաստիարակությանն ու կրթմանը, մնում են ուժի մեջ:

Յուրաքանչյուր մարդու համար հոգևոր սննդի ակունքը սկսվում է դպրոցից, և եթե այն հարուստ է լինում ու բեղմնավոր, ապա մուտքը դեպի կյանք դյուրին է դառնում: Բարերար Վ. Կարապետյանի կյանքը դրա մի վկայությունն է: Նա շատ հետաքրքիր դրվագներ ներկայացրեց դպրոցի պատմությունից, որտեղ ինքը ուսանել է Հայրենական պատերազմի տարիներին, երբ դպրոցը զուրկ էր տարրական պայմաններից: Բայց անգամ ման պայմաններում սովորելով՝ դպրոցի շրջանավարտները դարձել են հայրենիքին իրապես պիտանի մարդիկ, ասաց նա: Նրա

խոսքերը՝ «Այս դպրոցում վատ սովորել հնարավոր չէ, այս դպրոցում վատ աշխատել ուղղակի անհնարելի է», կարելի է համարել կոչ, պատգամ՝ սովորողներին ու դասավանդողներին:

Իսկ աշակերտուհի Արմինե Ղահրամանյանի ելույթը հնչեց որպես բոլոր աշակերտների սրտի խոսք և երգում՝ լավ սովորելու և մեր նախնիներին արժանի հետնորդներ դառնալու: Ուրիշ դպրոցականներ ևս իրենց երախտագիտությունը հայտնեցին հայրենիքին նվիրված բանաստեղծություններով և ազգային պարերով:

Դպրոցի կառուցումն իրականացրել է «ԱԿ-3» ՓԲԸ-ն: Սկսած ընկերության ղեկավար Արկադի Գալստյանից մինչև վերջին բանվորը՝ շնորհակալանքի արժանացան դպրոցի ղեկավարության ու շրջվարչակազմի կողմից:

Դպրոցի մուտքի կարմիր ժապավենը կտրելու պատվավոր արարողությունը կատարեցին ժան Անդրյանի դուստր Կարինե Անդրյանը և 6-րդ դասարանի Բելա Գրիգորյանը:

Ներկայությունը շրջեցին դպրոցի դասատենյակներով, հիացան հարմարություններով ու հագեցվածությամբ: Հարկ է նշել նաև ամենակարևորի մասին. առաջին դասարանցիների թվի աճի միտում կա, և հեռու չէ այն օրը, երբ դպրոցը աշակերտներ կընդունի իր լրիվ հզորությամբ:

Բոլորի շուրթերից այս մաղթանքն էր հնչում.

«Շնորհավոր նորամուտդ, Աստղաշենի ժան Անդրյանի անվան դպրոց: Բարի՛ վայելում: Թող այսպիսի դպրոցների բացմամբ արժևորենք մեր մեծագույն տոհմը՝ Արցախի Հանրապետության հռչակումը:

ՄԵՐ ՈՒՇԸ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆ Է

Գիտելիքը մշտապես հզոր ուժ էր թշնամուն դիմակայելու և հաղթելու համար: Տեղին է ասված, որ եթե հայրենիքը վտանգի մեջ է, գրչի սվին ամրացրու, և ընդհակառակը, սուրն ու գրիչը միասին ունեն համաուժային մեծ խորհուրդ:

Սեպտեմբերի 1-ին եղիչե Զարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում հնչեց ուսումնական տարվա առաջին զանգը, զանգ, որն ազդարարեց մեծ ճանապարհի սկիզբ: Միջոցառմանը

պետք է ավելի գրնգուն հնչեցնի Մաշտոցի «Այբ, բեն, գիմ»-ը:

Իր սրտի ջերմ խոսքն ասաց դասավար Գ. Գալստյանը: Նա ևս շնորհավորեց մանուկներին և հորդորեց լավ սովորել, քանի որ մեր ուժը գիտելիքների մեջ է:

Անչափ հուզիչ էր 9-րդ «բ» դասարանի աշակերտուհի Ա. Կարապետյանի ելույթը և շնորհակալական խոսքը՝ ուղղված առաջին դասարանցիներին: Նա ասաց, որ հպարտ է, որ կրթություն է ստացել հենց ե. Զարենցի անվան դպրոցում և անչափ շնորհակալ է դպրոցի ուսուցիչներից:

Լավագույն ցանկություններով ու բարի մաղթանքներով հանդես եկավ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պետական տեսչության գլխավոր մասնագետ Վ. Ավետիսյանը: Նա շնորհավորեց առաջին դասարանցիներին՝ ցանկանալով նոր ձեռքբերումներ ու հաջողություններ, ինչպես նաև մաղթեց Արցախ աշխարհին մշտնջենական խաղաղություն:

Առաջին դասարանի աշակերտները հանդես եկան ասմունքով, երգով ու պարով:

Առաջին զանգը հնչեցնելու պատվին արժանացան դպրոցի երկու լավագույն աշակերտներ և երկու առաջին դասարանցիներ:

Հնչեց կրթօջախի առաջին զանգը, որը խորհրդանշեց ապագայի հանդեպ լցված հույս ու հավատը:



բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն ժ. Գրիգորյանը: Նա ջերմ խոսքերով շնորհավորեց մանուկներին և մաղթեց, որ փոքրիկները միշտ խաղաղ երկնքի տակ ապրեն:

Աշակերտներին շնորհավորանքի խոսք և պատգամներ հղեց դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը: Նա պատգամեց փոքրիկներին լինել ջանասեր, ուշիմ և ունկնդիր դարերի ծայնին, հետնորդը լինեն մեր այն քաջերի, ովքեր իրենց արյամբ օժեցին սուրբ հողը արցախյան, ովքեր ընկան հանուն մեր այսօրվա կյանքի: Դպրոցի տնօրենը ասաց նաև, որ արցախյան հողում զանգերը պետք է միշտ դողանցուն հնչեն, և հայ մանուկը դպրոց մտնելով՝

ՉԱԺԱՐՈՒՄ ՏՈՆԵՑԻՆ ԴՊՐՈՑԱՄՈՒՏԸ

1 Տնօրեն Իրինա Սևունյանի գեկուցումը Արցախի պարտադրված պատերազմում Չափարի կրած գրկանքների, գյուղից հարկադրված վտարման, որը տևեց հավերժություն թվացող ութ ամիսներ, և նրա վերածնությանը ձեռնամուխ եղած համագյուղացի Կարուժան Գրիգորյանի գործունեության մասին էր:



1993թ. փետրվարին Արցախի պաշտպանության բանակի մարտիկները ազատագրեցին գյուղը: Երբեմնի ծաղկուն ու շեն բնակավայրից ոչինչ չէր մնացել: Շուրջբոլոր փլատակներ էին, անմխիթար վիճակում էր դպրոցի շենքը: Պետք էր շտապ կարգի բերել այն և շարունակել հաստատուն կանգնել հարազատ հողի վրա՝ հանուն մեր քաջարի հայրերի թափած արյան և ի հեծուկս մեր թշնամիների: Կարճ ժամանակում շատ թե քիչ կարգի բերվեց դպրոցը, բայց չկար գույքը: Իր սրտացավ վերաբերմունքով արագ արձագանքեց դպրոցի նախկին սան Կարուժան Գրիգորյանը, որը գույքով ծանրաբեռնված բեռնատարը ուղարկեց դպրոցի բակ: Այդ արարքը դարձավ հետագայում նրա լայնածավալ բարեգործական գործունեության սկիզբը: Նրա հայրենաշեն գործունեությունը երբեք ուղղությամբ է՝ ենթակառուցվածքներ, գյուղատնտեսության զարգացում, ժողովրդագրության բարելավում:

Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Խաչատրյանը, շնորհավորելով նոր դպրոցի բացման առթիվ, բարձր գնահատեց Վ. Գրիգորյանի բարեգործական ծրագրերը, որոնց իրականացման շնորհիվ Չափարն այսօր դասվում է հանրապետության զարգացող գյուղերի շարքին:

Վ. Գրիգորյանը շարունակելու է իր ծրագրերը նաև շրջանի ու հանրապետության մասշտաբով:

Դիպուկ էր «Հայաստան համահայկական հիմնադրամի» տնօրեն Արա Վարդանյանի եզրահանգումը: «Շրջելով Չափարում» հասկանում ես, թե ինչ է պակասում մյուս գյուղերում. պակասում է Կարուժան Գրիգորյանի պես մարդը:

Նշենք, որ դպրոցը կառուցվել է բարերարի ֆինանսական միջոցներով համալրված հիմնադրամի և ԼՂՀ կառավարության օժանդակությամբ:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը շնորհակալություն հայտնեց հանրապետության ղեկավարությանը՝ դպրոցաշինության ծրագիրը հետևողական կյանքի կոչելու համար: Այսօր հանրապետությունում քիչ թվով կրթօջախներ են մնացել անմխիթար վիճակում: Բնականաբար, նոր կրթական միջավայրը նոր պարտավորություններ է դնում ուսուցիչների առջև և բարենապաստ պայմաններ ստեղծում գիտելիքները բազմապատկելու համար: Հանճարները ծնվում են փոքր գյուղերում՝ հիշեցրեց նախարարը:

Վարուժան Գրիգորյանի խոսքը կարճ էր, բայց նպատակամետ. Չափարի դպրոցը եղել է առաջավորների շարքում, լավագույն ավանդույթները պետք է շարունակվեն:

ԱՍՈՒԼԻՍ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ՏԱՐԻ



Նոր ուսումնական տարվա նախաշեմին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը հրավիրել է մամուլի ասուլիս և ամփոփել նախորդ ուստարում կատարված աշխատանքներն ու ներկայացրել իրականացվելիք խնդիրները: Նրա խոսքով՝ 2014-2015 ուսումնականը նույնպես կրթության ոլորտի համար կնշանավորվի որպես կրթական բարեփոխումների իրականացման հաջորդական տարի:

Հանրապետության 219 հանրակրթական դպրոցներ իրենց մասնաճյուղերով պատրաստ են սեպտեմբերի 1-ին ընդունել շուրջ 21 հազար դպրոցականների, 5000 ուսուցիչների, 4000 ուսումնասօժանողական աշխատողների: Նախարարն ուրախությամբ փաստեց, որ տարեցտարի առաջին դասարանիկների թիվն աճում է: Վերջին երկու տարում այն շրջափելի է: Այդ թվաճը պայմանավորված է արցախյան մեծ հարսանիքով, որի սերունդն արդեն հաճախում է դպրոց: Հաջորդ տարի առաջին դասարանիկների թիվը կանցնի 2500-ից:

ԼՂՀ-ում գործում է կրթական կայուն համակարգ՝ սկսած նախադպրոցական օղակից, մինչև բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթություն: Ս. Ասրյանի հավաստմամբ՝ յուրաքանչյուր աստիճանում իրականացվում է պետական քաղաքականություն, որն ուղղված է նրան, որպեսզի կրթության համակարգն ունենա զարգացման այն աստիճանը, որն անհրաժեշտ է մեր երկրի զարգացման համար:

Նախարարի համոզմամբ՝ կրթական բարեփոխումները տևական գործընթաց են, և չի կարելի սահմանել, թե որ ժամանակահատվածում այն իր ավարտը կունենա: Նա որոշակի տեղեկություններ ներկայացրեց ոլորտի տարբեր օղակների մասին:

Հանրապետությունում գործում են 44 մանկապարտեզներ, որոնցից 30-ը պետական են, ցանցի ընդլայնման գործընթացը շարունակվում է: Ներկա դրությամբ պատրաստ է Կովսականի մանկապարտեզի շենքը, մի շարք տեղերում շինարարական աշխատանքներ են ընթանում, և տարվա ընթացքում կբացվեն նոր մանկապարտեզներ: Նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը միայն առանձնացված մանկապարտեզներով չի սահմանափակվում: Ս. Ասրյանը նշեց անցած ուսումնական տարում այս ուղղությամբ կատարված մի կարևոր քայլ: Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում ստեղծվեցին բավարար պայմաններով նախադպրոցական տարիքի ավագ խմբի երեխաների համար խմբեր, որը մեծ դեր խաղաց մանկապարտեզների բեռնաթափման և ավելի շատ երեխաներ ընդգրկելու առումով: Անցած տարի ընդգրկվել են շուրջ 770 երեխաներ: Մայրաքաղաքի բոլոր դպրոցներում ստեղծվել են նախադպրոցական խմբեր, և այսօրվա դրությամբ դրանցում 920 երեխա է ընդգրկված:

ԿԳ նախարարն անդրադարձավ կրթության նոր պահանջներին համապատասխան դասավանդման գործընթացի բարելավման, ուսման որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկված քայլերին: Այդ շարքում առաջինը նշեց ուսուցիչների վերապատրաստման, մեթոդական վարպետության ապահովման միջոցառումները: Ուսումնական գործընթացում լայն տեղ է տրվում տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին: Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, իսկ խոշոր դպրոցներում կան նաև համակարգչային կաբինետներ: Բացի դրանից, նոր տեխնոլոգիաների

ներդրման ծրագրեր են իրականացվում: Մասնավորապես ՆՈՒԻ ծրագիրը: Ստեփանակերտի և Շուշիի, նոր ուսումնականից նաև շրջկենտրոնների դպրոցների 1-4-րդ դասարանների համար գործում է «Մեկ երեխային մեկ համակարգիչ» ծրագիրը: Չնայած այս գործընթացում դեռ կան որոշ թերություններ, բոլոր դեպքերում սա նպաստում է, որ առաջին դասարանից սկսած երեխաները տիրապետեն տեղեկատվական տեխնոլոգիաներին ու կարողանան դրանք օգտագործել ուսումնական գործընթացում:

Նախարարը տեղեկացրեց, որ դրանից բացի այս տարվանից կգործի «dasar.am» ծրագիրը, որը ներդրվել է անցած ուսումնական տարվա վերջին: Սեպտեմբերի 1-ից ծրագիրը հստակորեն կգործի, որի նպատակն է աշակերտների առաջադիմության, նրանց հաճախելիության, ուսուցիչների և ծնողների կապի և ընդհանուր հարաբերությունների, ինչպես նաև դպրոցի կառավարման ավելի արդյունավետ ձևի կիրառումը: Նրա համոզմամբ՝ այդ ծրագրի միջոցով ևս կկարողանան առաջընթաց արձանագրել: Ծրագիրը կլինի շարունակական: Նպատակն է՝ ստեղծել համընդհանուր դպրոցական ցանց, որը կմիասնա ՅՊ դպրոցական միասնական ցանցին, և հնարավոր կլինի օգտվել բոլոր այն էլեկտրոնային պաշարներից ու կրթական ծրագրերից, որոնք անհրաժեշտ են ուսուցման արդյունավետության ապահովման համար:

Անշուշտ, մեծ դեր են խաղում նաև շենքային պայմանները: Կարելի է ասել, որ այն պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկն է. պատերազմական գործողություններում ավարտվելուց անմիջապես հետո իշխանությունները ձեռնամուխ եղան դպրոցական շենքերի վերակառուցմանը: Սեպտեմբերի 1-ից հինգ դպրոցներում պարապմունքները կընթանան նոր դպրոցական շենքերում, երկուսը՝ Ստեփանակերտում՝ հ. 1 դպրոցի մասնաշենքը, հ.6 դպրոցը, Մարտակերտի շրջանի Չափարիի Քաջաթաղի շրջանի Արտաշավիի և Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ դպրոցները: Իսկ վեց դպրոցներում ընթանում են հիմնանորոգման աշխատանքներ: Բացի դրանից, հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնակի նորոգման աշխատանքների համար պետության կողմից տրվում են միջոցներ: Դրանք ևս ավարտման փուլում են: Այսպիսով, դպրոցական շենքերը պատրաստ են ուսումնական տարվան:

Նախարարը փաստեց, որ իրականացրած ուսումնադաստիարակչական բազմաթիվ խնդիրները կապված երեխաների արտադպրոցական, արտադասարանական միջոցառումների, առարկայական օլիմպիադաների, ռազմամարզական մրցումների կազմակերպման հետ, դրական ազդեցություն են թողել, և յուրաքանչյուր ուղղությամբ առաջընթաց է արձանագրվել: «Իրոք, արդեն ունենք գիտելիքներով օժտված, լավ ձևավորված աշակերտական կազմ, որը հաջողությամբ է հանդես գալիս ինչպես ներհանրապետական, այնպես էլ ՀՀ հանրապետական օլիմպիադաներում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մեր երեխաները մասնակցում են մի շարք ծրագրերի»: Այդ շարքից Ս. Ասրյանը թվարկեց «Դիջիթեթ», «Էկոտուր» միջազգային մրցույթ-ստուգատեսները, ինչպես նաև մի քանի մեծ դպրոցներում ստեղծված խմբակները «Ինստիդեթ» կազմակերպության օժանդակությամբ, որի շնորհիվ մեր երեխաները տիրապետում են ռոբոտաշինության հիմունքներին: Այս ուղղությամբ Ծմակահող գյուղում կազմակերպվեց ամառային դպրոց-ճամբար՝ դպրոցականների ընդգրկումով, որին օժանդակեցին ԵՊՀ ֆիզմաթ, այլ դպրոցների մասնագետները, և երեխաները հանգստանալու հետ միասին կարողացան իրենց գիտելիքները հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների գծով, ինչպես նաև մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներից: Այս գործընթացը կլինի շարունակական:

Ուսումնական տարվան պատրաստ են նաև դասագրքերի ձեռքբերման առումով: Ձեռք են բերվել և բաշխման փուլում են Հայաստանում տպագրված բոլոր դասագրքերը: Այժմ մանկա-

վարժական կադրերով համալրման աշխատանքներն են ընթանում: Ներկայումս ուսուցիչներին աշխատանքի են ընդունում մրցույթի նոր կարգի համաձայն: Մրցութները հայտարարված են, և գործընթացն ընթանում է: Նախարարի համոզմամբ՝ սա ևս մի պայման է՝ ճիշտ ընտրություն կատարելու համար:

Ս. Ասրյանը նշեց նաև այն աշխատանքները, որոնք առայժմ չի հաջողվում լիարժեք իրականացնել: «Անկասկած, մենք որակյալ մանկավարժական կազմի համալրման խնդիր ունենք», -ասաց նա: Օգոստոսյան խորհրդակցությունների հանձնարարականներից մեկ էլ այս է՝ երեխաների մասնագիտական կողմնորոշումը: Քիչ շրջանավարտներ են դիմում բուհերի մանկավարժական մասնագիտությունների գծով: Խնդիրն այն է, որ կողմնորոշեն, որ լավ գիտելիք ունեցող դիմի մանկավարժական մասնագիտությունների գծով: Սա ոչ միայն կրթության ոլորտի խնդիրն է, այլև ընդհանրապես՝ հասարակության: Իհարկե, խթանիչ հանգամանքներ են հարկավոր դրա համար, ուսուցիչը պետք է կարողանա ստացած աշխատավարձով իր համար բարեկեցիկ կյանք ապահովել: Եղել են ժամանակներ, երբ ուսուցիչ աշխատավարձը անենաբարձրն էր: Հիմա էլ այն միջինացված է, ոչ շատ բարձր է, ոչ՝ ցածր: Աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը սկսել են ուսուցիչներից, և պարբերաբար մի քանի տարի շարունակ դրանք բարձրացվել են: Նախարարը համոզված է, որ տարեցտարի կկարգավորվի այս հարցը: Չնայած նաև ուսուցիչն ինքը կարող է իր աշխատավարձը բարձրացնել՝ տարակարգ ստանալով, որն ինքնին ենթադրում է աշխատավարձի հավելում: Բացի այդ, գյուղական շրջաններ գործառնվող ուսուցիչները ստանում են աշխատավարձի 50 տոկոսի չափով հավելավածար: Վերջին տարիներին նկատելի է հոսքը միջին մասնագիտական և արհեստագործական հաստատություններ: Ստեղծված են նաև բոլոր պայմաններն այս հաստատություններից ցանկության դեպքում սահուն անցում կատարելու բուհեր, որն ինքնին խթան է միջին մասնագիտական կրթության ոլորտում համապատասխան համակազմ ապահովելու համար: Սակայն այստեղ էլ խնդիրներ կան ուսման որակի բարձրացման, շենքային պայմանների և այլ խնդիրների կատարման ուղղությամբ:

Բարձրագույն կրթության ոլորտում ևս առաջընթաց է արձանագրվել այն առումով, որ մեր բուհերն աստիճանաբար կայանում են, ընդլայնվում են կապերը ինչպես հայաստանյան համապատասխան ուսումնական հաստատությունների, այնպես էլ այլ երկրների բուհերի հետ: Հունիսի 28-ին Ստեփանակերտում կայացած «Կրթություն» առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացի համատեքստում» միջազգային համաժողովի նպատակն էր մեկ անգամ ևս բարձրաձայնել, որ չճանաչված պետությունները պետք է օգտվեն կրթության այն բոլոր իրավունքներից, որոնք ընդունված են միջազգային չափանիշներով:

Բոլոր դեպքերում սեպտեմբերի 1-ը նախ և առաջ տոն է առաջին դասարանիկների համար: Նրանց համար ստեղծված են բոլոր պայմանները: Նախ՝ նյութական առումով. պետության կողմից յուրաքանչյուր աշակերտի տրվել է 20 հազար դրամ՝ հագուստ, գրեմական պիտույքներ գնելու: Ու նաև «երկրապահ» միության կողմից տրամադրվել են պայուսակներ՝ գրեմական պիտույքների փաթեթով: Հասկանալի է, որ ծնողն էլ իր հերթին է ձգտում այդ օրը դարձնել տոն, հույս փայփայում, որ իր զավակը կկարողանա գիտելիքների բարձունքներ նվաճել:

Նոր ուսումնականը մեկնարկում է ԼՂՀ հռչակման հերթական տարեդարձի հետ: Ուսումնական տարվա առաջին օրը կանցկացվի Անկախության դաս, որին կրթական պատասխանատուներից բացի կմասնակցեն պետական այրեր, Շարժման առաջամարտիկներ, ազատամարտիկներ: ԼՂՀ կրթության և գիտության նախարարը ասուլիսն ավարտեց շնորհավորանքի խոսքով՝ ուղղված սովորողներին, կրթության բնագավառի աշխատողներին, մեր ժողովրդին:

ԽՈՍԷ ՇՆՈՐԱՎՈՐԱՆԵՒ

ԼՂՀ ԿԳ նախարարությունը ջերմորեն շնորհավորում է համակարգի երախտավորներից մեկին՝ **Ռուբեն Ալեքսանդրի Օսիպովին** ԼՂՀ նախագահի կողմից բարձր պարգևի՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալի արժանանալու համար:

Ռ. Օսիպովը այն բացառիկ մարդկանցից է, որոնց կերպարում ներդաշնակվում են մարդկային ու մասնագիտական արժանիքները: Պրպտուն մտքի, անդադրում աշխատասիրության տեր՝ միշտ եղել է ստեղծողի և առաջամարտիկի դերում, ապրել մարդկային մի կյանք, որն ընթացել է աշխատանքային մեծ եռանդով ու նվիրումով:

2001 թվականին տեղափոխվելով Արցախ՝ մեկ սուրբ նպատակ ուներ՝ 2 դուստրերին տալ հայաշունչ կրթություն և դաստիարակություն: Այսօր նրանք կատարելապես տիրապետում են մայրենի լեզվին, ապրում որպես Արցախի հայրենասեր քաղաքացիներ:

Աշխատանքային գործունեության ողջ ընթացքում Ռ. Օսիպովը իրեն դրսևորել է որպես գրագետ, բարձր որակավորում ունեցող մասնագետ և կազմակերպիչ՝ վայելելով հանրության, հանրապետության ուսուցիչների հարգանքը:

Հուրախություն բոլորին՝ այսօր ըստ արժանվույն է գնահատվել նրա գործունեությունը:

Վերստին շնորհավորելով մեր սիրելի գործընկերոջը՝ մաղթում ենք անձնական հաջողություններ, հետագա բեղմնավոր աշխատանք՝ հանուն մեր ժողովրդի ու նրա ապագայի:

Նախարարությունը շնորհավորում է նաև պետական պարգևի արժանացած համակարգի մյուս աշխատողներին. «Երախտագիտություն» մեդալով պարգևատրված՝

Արաքսյա Արտավազի Ավագյանին՝ Քաջաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ, Բերձորի հ. 2 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի **Լուսինե Համոյի Եսայանին**՝ Մարտունու շրջանի Սպիտակաշենի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Գրիգոր Ալեքսանդրի Համբարձումյանին՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի դասուհի

Սամվել Սեդրիկոսի Հարությունյանին՝ Քաջաթաղի շրջանի Բազմատուսի միջնակարգ դպրոցի գինդել

Սամվել Գեորգիի Հովսեփյանին՝ Հարոուքի շրջանի Դրախտիկի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ

Տանյա Չավենի Մեծունցին՝ Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոցի տնօրեն

Հայկուշ Արարատի Միրզոյանին՝ Ասկերանի շրջանի Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի, փոխտնօրեն

Ավարդ Միքայելի Միքայելյանին՝ Ստեփանակերտի հ.9 հիմնական դպրոցի դասավար

Հասմիկ Նապոլեոնի Սկրտունյանին՝ Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի պատմության ուսուցչուհի

Ավարդ Ռազմիկի Վարդանյանին՝ Շահունյանի շրջանի Նոր Խարխափուտի հիմնական դպրոցի տնօրեն

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐ

ՁՈՆԵՐԳ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ

ԻՆՉՊԵՆ ԽԱՉՔԱՐԸ ՄԵՐ ՀՆԱՊԱՐՅԱԿ



Մենք հաստատական պայքարով նվաճեցինք ազատությունը և հասանք բաղձալի անկախության: Մենք անկախության անախի բերկրանքը վայելեցինք համայն հայության մեծ վճռականության, անվեհեր հերոսականության, աներեր կամքի շնորհիվ:

Մենք՝ հայության հավաքական ուժը, համաձայն միասնությունը, զինված պայքարի ու հաղթանակի ոգեղեն բռնկումը...

Մենք՝ հայոց սահմանների պաշտպան քաջարի զինվոր ու իրամանատար, հաղթանակի նվաճումները ամուր պահող աննկուն արցախցի, տնտեսական բարեփոխումների նախաձեռնող:

Մենք՝ բռնկված գործը ուժ, թշնամուն հակադարձող ու ընկճող հաղթ բազուկ... Եվ ոգեղեն ուժով կառուցեցինք մեր փյունիկ երկիրը, և վեր հանեց այն՝ Անկախության ծիրանին ուսերին: Ու դարձավ մեր երկիրը հոգու պատվար ու պատնեշեց մեզ վտանգներից ահասարսուռ...

Փա՛ռք հաղթանակը կողոնքերին՝ հայոց բանակի քաջազուններին:

Շունչ առավ պապենական հողը, խայտաջ խաղաղ ստեղծագործ աշխատանքի բերկրանքով, ու երկիրը ակոս-ակոս ծլարձակում տվեց: Շենացավ երկիրը ու լիացավ հազար ու մի բարիքով: Արփին է ժպիտով ջերմացնում բերք ու բարիք, ծիլ ու ծաղիկներն են շիկնում: Հայրենի հողը բռնկված է արարման երկունքով. ծաղկունք-արբուք է հայոց անդաստաններում:

Փա՛ռք հայրենյաց սերմնացաններին:

Երկիրն Արցախ կերտվում է նորովի: Մա մեր պայքարի ու վերակերտման օազիսն է: Մեկը մյուսի ետևից շենանում են քաղաքները, ավաններն ու գյուղերը, արարող ձեռքերն են հասնում, հայրենիքի շենացման պատնե է խոյանում. որտեղ՝ դպրոց ու մանկապարտեզ, որտեղ՝ գյուղական համայնքի համալիր, որտեղ՝ պուրակ ու զբոսայգի, որտեղ՝ մշակութային օջախ, ռազմամարզական համալիր, տուն ու տեղ...

Փա՛ռք հայրենյաց շինարարներին:

Արցախ երկրի ամեն մի անկյունում հնչում են կոչնակները: Ով չի լսում, ուրախանում, ու մ սիրտը չի բերկրանք ապրում ու երկյուղում ու վեհանում սուրբ խորանին մոտենալիս, այնտեղ գեթ մի մոմ վառելիս, Արարչական սրբությանը հաղորդվելիս: Աստծո պարզ և մեր անկախությունը, ինչին կոչված են և հոգևոր խորանի ժամ ու պատարագը, ու հայ մարդն իր գործության ակունքն այստեղ է փնտրում, այլապես կարող է այլադավան հոսանքների խառնվել՝ ընկնելով աղանդավորական հորձանուտները... Արդ, լինենք ավելի մերձ աստվածային խորհուրդներին ու շենացնենք մեր հոգևոր անդաստանը աստվածընկալ գործերով: Մեր մկրտությունը լինի Սուրբ հոգու և Աստվածային օրհնանքով և մեր պատարագների հետամուտ՝ ունկնդիր լինենք ավետարանի բարի լուրին ու լցվենք բարեգութ Աստծու շնորհներով: Համախմբվենք Առաքելական եկեղեցու շուրջ, լինենք ճշմարիտ քրիստոնյաներ ու լցնենք մեր ընտանեկան հարկերը լիաբուռ օրհնություններով՝ ասելով.

-Փա՛ռք Արարչին ու հոգևոր անդաստանի մշակներին:

Մեր ժողովուրդը հետամուտ է ամեն մի նվաճում բազմապատկելու և նորանոր նվաճումների՝ քաղաքական, տնտեսական, գիտական, հոգևոր, մշակութային ասպարեզներում: Մեզ խրախուսում է ամեն մի լավը: Մեր նպատակը անշեղորեն մեր հաղթանակներն ամրակայելն է: Մենք ենք մեր երկրի դիմագիծը կերտողները: Մենք ապագայի հունդեր ենք գցում, որ տարիներ անց ամեն ծիլը դառնա մի բարդի, հաստաբուն կաղնի...

Մենք սահմանների աշխուրջ զինվոր ենք, և ամեն մի ոտնձգություն թշնամու կողմից նրա մահվան լուրն է գուժում: Թող դա դառնա կյանքի դաս, ու լավ իմանա թշնամին, որ մեր ամեն մի զինվորի կողքին կանգնած է հայրը, ավագ եղբայրը, ու կամավոր է ամեն մի հայ:

Ու քանի միշտ աներեր է կամքով հայ զինվորը, անասան է հայոց սահմանը: Եվ մենք պիտի լինենք միշտ զգոն ու խիզախության մրցակցով՝ անկախությունը ամուր պահենք և սահմանները՝ անառիկ: Անառիկ պիտի մնա Հայոց անկախության բերդը: Եվ ողջախոս պիտի լինենք մենք ազգովի, քանզի արյամբ է նվաճված մեր անկախության բերդ-ամրոցը, որ դրսից հսկվում է աշալոջորեն, իսկ ներսից՝ բարգավաճում, և ամեն մի հայ անչափ հպարտ է, որ հայրենակերտման գործի մեջ ավանդ ունի:

Ու քանի կա այսպիսի կամք ու նվիրում, Արցախ աշխարհի անկախությունը հուսալի ժպիտներ կընծայի՝ հարատև ու մարդկանց թեթևակալք դարձող:

Եվ թող այս երկրում, ուր անկախության օրհներգը խորխոր է հնչում, արշալույսներն ամեն օր լինեն ոսկորված, արփիագոծ...

Ուրեմն փա՛ռք մեր հայրենիքի ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ կերտողներին:

Վարդիթեր ՀԱԿՈՔՅԱՆ
Շուշիի Խ.Աբովյանի անվ. հիմն. դպրոցի հ.լեզվի եւ գրականության ուսուցչուհի



Մեր պատմությունը անխոս անցորդների քարավանն է: Այն հախուռն է, ցատունով ու միշտ պոթունով լի: Նրա պոթուններից մեկն է Արցախյան զոյաճարտուն էր, որը դարձավ վայրիվերումներով լի մեր պատմության փայլուն էջերից մեկը:

Հայրենասիրության միևնույն աղբյուրից պապակը չհագեցած բազում հայրողներ նորից բռնկվեցին ու նետվեցին մարտի դաշտ մեր պապենական հողում ազատ ապրելու իրավունքը հայտարարելու համար: Նրանք նետվեցին մարտի՝ քաջ գիտակցելով, որ երբ հանկարծ մահասարսուռ քամին պարուրի իրենց տաք մարմինը, հայրենի հողը չի կարմրի ամոթից: Արցախյան շարժումը ալեկոծեց ողջ հայությանը՝ առիթ տալով խորհելու ազգային շահերի միասնության մասին, այն տվեց մեզ ազատ ու անկախ Արցախ: Արցախի անկախությունը Աստծու կողմից պարզ և չէր, այն մենք վաստակեցինք բազմահազար հայրողների արյան գնով: Մենք պահել ու պահպանել ենք այն՝ ի հեճուկս հայ ժողովրդի թշնամիներին: Այսօր առավել, քան երբեք վատահորեն ենք պահպանում մեր երկրի սահմանները, և աշխարհի բոլոր ժողովուրդներին կողքին հավասար իրավունքով կառուցում ենք մեր Արցախ պետությունը, պետություն, որն արդեն ունի պետական բոլոր կառույցները, հզոր ու հաղթական բանակ, պետություն, որտեղ մարդու իրավունքները պաշտպանված են սահմանադրությամբ: Համոզված են, որ աշխարհը վերջապես կհասկանա մեր հաստատականությունը ազատ ու անկախ Արցախ ունենալու հարցում և վերջապես կսաի իր արդար խոսքը:

Օգոստոսյան իրադարձությունները նորից ալեկոծեցին մեր հանգիստը: Մենք կարողացանք արժանի հակահարվածով ապացուցել, որ հայ զինվորը կանգուն է անասան: Հայրենիքը պաշտպանելու գիտակցումը այնքան մեծ է մեր մեջ, որ անգամ հաշմանդան դարձած ազատամարտիկն ու արդեն տարիքն առած նախկին ռազմիկները, նորից լցված քաջությամբ, շտապեցին առաջին գիծ՝ հայ զինվորի կողքին կանգնելու, իրենց փորձը փոխանցելու, մարտական ոգին բարձրացնելու համար: Նրանք այսպիսով ապացուցեցին, որ հայրենասիրությունը մեր բնավորությունն է, մեր ապրելակերպը, մեր ազատությունն ու անկախությունը: «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, մենք մենք մեր պակասից» (Գ. Նժդեհ): Արցախյան զինվորն իր անպարտելիության կնիքը դրեց և այս մարտում: Միտա ուռչում է հպարտությունից, ու են ակամա ուզում են գոչել: «Մենք զինվոր ենք ազգովի: Մենք ենք թու ուժը, Արցախ: Վստահ եղիր ուժիդ և իրավունքդ դիր անկասկած լինելու համար»:

Բարբարոսը միշտ մնում է բարբարոս, լինի ազգերի, թե՛ թուրք: Ամբարդկային վերաբերմունքը հասարակ, անգեներ մարդու նկատմամբ նորից պատռեց նրանց, մեղմ ասած, անբարոյական կերպարը: Ի՞նչ շահեցին.

Պատմական ՄԱԹՎՈՍՅԱՆ Մարտիրոս 2րդ. Ալիբալիի միջև. դպրոցի պատմության ուսուցչուհի, ՄԿԱ գծով փոխպետ

ԼՈՒՍԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԵՐ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ



«Լուսարար» թերթի խմբագիր, հարգարժան Սվետլանա Խաչատրյան, նորանոր ձեռքբերումներն ու ստեղծագործական հաջողություններն են մարտնչում Ձեզ, անկեղծ սիրով ու մեծ ուրախությամբ շնորհավորում նաև թերթի իրատարակության հետ առնչվող բոլոր անձանց՝ կրթության ոլորտի հարազատ թերթի 15-ամյակի կապակցությամբ:

«Լուսարար» թերթի խմբագիր, հարգարժան Սվետլանա Խաչատրյան, նորանոր ձեռքբերումներն ու ստեղծագործական հաջողություններն են մարտնչում Ձեզ, անկեղծ սիրով ու մեծ ուրախությամբ շնորհավորում նաև թերթի իրատարակության հետ առնչվող բոլոր անձանց՝ կրթության ոլորտի հարազատ թերթի 15-ամյակի կապակցությամբ:

Որպես դպրոցի ուսուցչուհի՝ Արցախի լրատվական դաշտում առանձնապես կարևորում են «Լուսարար» գիտակրթական թերթը, որն արդեն տասնհինգ տարեկան է: Լույս արարող դրքան տեղին է ընտրված այս ամունը: Այս բացառիկ լույսի արարիչը միշտ էլ կարողացել է պահպանել իր ուղղվածությունը ու ճանաչումը, առավելապես հանրակրթության ոլորտի աշխատողներին համար եղել է չափազանց բովանդակալից ու հետաքրքիր՝ հրատարակված հոդվածներով, նորարարական շնչով ու արդիական հնչողությամբ: Մեր ժողովրդի արթնացման և զարթոնքի հետապետերազմյան տարիներից առայսօր թերթը պատվով է կատարել իր առաքելությունը, այն կապող օղակ է դարձել հանրակրթության ոլորտի բոլոր աշխատողների համար, տեղեկատվության աղբյուր, բայց նաև՝ խոսքի ազատության ազդեցիկ միջոց:

Ողջունելի է, որ էլեկտրոնային թերթերի առկայությամբ «Լուսարարը» կարողանում է թերթ կարդալու ավանդույթը պահպանել: Ինչպիսի՞ սիրով են սպասում են այս թերթին՝ այդ մասին գիտեն նույնիսկ իմ բոլոր գործընկերները:

Պատահականություն է սա, թե՛ կանխամտածված զուգադիպություն, որ սեպտեմբերն առնչվում է Գիտելիքի օրվա, թերթի հրատարակության և մեր նորանկախ հանրապետության ծննդյան հետ:

Լուսարարը մեզ դարձրել է ավելի անկոտրում, հաստատական ու ամրակուռ, չնայած յուրաքանչյուր էլ քաջ գիտակցում ենք, որ ազատասիրությունը, անկախության ձգտումը, արդար գոյամարտի գաղափարը մենք ժառանգել ենք մեր նախնիներից: Այդ բարոյական գծերը, որոնք ամեն օր ուսուցանվում են որպես բարձր արժեքներ, մեր արյան մեջ են, հոսում են մեր երակներով, այդ արժեքները դեպքից դեպք դրսևորվող երևույթներ չեն, դրանք յուրաքանչյուրիս հոգու մեջ են և ուղեկցում են մեզ մեր ողջ գիտակցական կյանքում: Թեպետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը սահմանադրորեն ու փաստացի անկախ է և ինքնիշխան, սակայն միջազգայնորեն չճանաչված պետություն է, իմ կարծիքով, այստեղ ապրող յուրաքանչյուր արցախցի՝ որպես իր երկրի զավակ, հոգով ու սրտով իրեն զգում է անկախ ու ազատ, չնայած աշխարհի չարիքը մարդկանց խաղաղ կյանքին ինչպես հազարամյակներ առաջ է սպառնացել, այնպես էլ շարունակում է սպառնալ այսօր, դրա վառ վկայությունը մեր խաղաղասեր ժողովրդի նորօրյա պատմությունն է, մեր «հարևանների» դատարկամիտ սպառնալիքներն ու խարդավանքները՝ ինչպես իրական, այնպես էլ տեղեկատվական դաշտում, բայց չպետք է մոռանանք, որ «ով չարիքի դեմ պայքարել չզիտի, միշտ կմնա չարիքին գերի»:

Ամձամբ ես իմ հայրենիքի անկախության տեսլականով չեմ ապրում, ես ինքս էլ ազատ եմ ու ինքնիշխան, ես այդ անկախությունն զգում եմ իմ մեջ, արմատներով կառչած եմ հողին, այս երկրի տերը ես եմ, դուք եք, բոլորս միասին անկախ ենք ու ազատ, անկախությունն իմ սաների համար հավերժ ճանապարհ է, որի վրա թափվել է արդար արյուն, հայ ստեղծելու քրտինք, գիր ու մատյան արարելու կամք ու հանճար:

Այսօր Արցախում կրթությունն ու գիտությունը մեր անպարտելիության ու հավիտենական գոյության հիմնական երաշխիքն են, պաշտոնաթերթը՝ «Լուսարարը», անկախությունը՝ մեր միակ ճիշտ ճանապարհը, որով հաստատական քայլում, և դեռ պիտի քայլեն սերունդները:

Նադաշա ՊՈՂՈՍՅԱՆ
Մարտիրոսի Վ. Բալայանի անվան միջև. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՎ, ՆՐԱ ԿԱՆՉՈՎ



ապատեղեկատվություն... ոչ չինիչ ու ոչ կա...

Խոստովանենք, մերքին տնտեսական...

գարգազման դաշտում իրականում...

Օրհասական պահին ոչ ոք...

բոլոր կարողությունները դարձ...

Մեր ժողովրդի անցած ողջ...

Ասածին առիվատեղյակ...

Չայոց Առյուծը նորից թափ...

Երանի՛ մեզ, երանի՛ մեր ժո...

թերևս փոքրիկ, բայց շատ թան...

Եվ մեզինքն յուրաքանչյուրը...

Յուրաքանչյուրս յուրովի...

Մեկս՝ արիության դասերով...

Բոլորս և բոլորս ներկայաց...

Մենք ուրիշ ճանապարհ չու...

Կատարենք մեր գործը խո...

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՅԱՆ Ստեփ. Ա. Դուլյանի ան...

Անկախ պետականության...

Անկախ պետականության...

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՉԻՆ՝ ԱՄԵՆԱՀՈՒՄԱԼԻ ՉԵՆՔ

Քանի դեռ հայ-ադրբեջանական...

Դրանում մեկ անգամ ևս համոզվեցինք...

Իրավիճակը վերջին և օգոստոսի...

Մենք ուրիշ ճանապարհ չու...

Կատարենք մեր գործը խո...

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՅԱՆ Ստեփ. Ա. Դուլյանի ան...

ՄԱՐԿ ԲԻԹՉԵՆ. «ԱՐՅԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱԶԱՏ ԵՎ ԱՆԿԱՆ ԱՊՐԵԼՈՒ՝



«Ամերիկացիները հանուն Արցախի»...

Ստորև ներկայացնում ենք նրա հետ...

Մեր կազմակերպության ծրագիրը...

Ասեն՝ ինչպես եկա Ղազախստան...

սովորեցի հայերեն: Ամերիկյան «Խաղաղու...

Առաջին անգամ Ղարաբաղ եմ եկել 2009...

Ինձ համար Ղարաբաղը շատ հետաքր...

Չեր ժողովուրդը ինձ շատ է դուր գալիս...

նում եք ձեր երկիրը: Ես հարգում եմ...

Դուք ընտանիք սիրող եք, դուք հավատ...

Մեր հիմնական նպատակը տնտեսական...

Մենք ուզում ենք համագործակցել...

Նվարդ ՍՈՂՈՍՏՆԱՆ

Սեր փոքրիկ Եմիլճանից էլ ինչոք...

Դիրքերը, որտեղ մենք էինք ներկայացել...

Ես՝ պահեստի զինվորս և դպրոցի ուսու...

Դիրքերում առկա զինատեսակների վիճակը...

Գրիշա ԱՌԱՔԵԼՅԱՆ Եմիլճանի հիմնական դպրոցի ուսուցիչ

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 2014-2015 ՈՒՄՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻՄ



Օգոստոսի 23-30-ը հանրապետությունում անցկացվեցին ուսուցիչների ավանդական օգոստոսյան խորհրդաժողովները: Մասնակցում էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, փոխնախարար Միքայել Համբարձումյանը, կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը, ԳՆԿ-ի տնօրեն և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանը, շրջանի ղեկավար աշխատողներ, հանրակրթական, նախադպրոցական, արտադպրոցական հաստատությունների ղեկավարներ, ուսուցիչներ: Լավեցին կրթության բաժինների վարիչների հաշվետվությունները (դրանք հերթով կտպագրենք «Լուսարարում» անցած՝ 2013-2014 ուսումնական տարում կատարած աշխատանքների, բացթողումների, թերությունների և նոր՝ 2014-2015 ուստարվա խնդիրների, անելիքների մասին):

ԼՂՀ ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը անդրադարձել է ընթացիկ, պետական ավարտական և միասնական քննությունների՝ շրջանների և մայրաքաղաքի դպրոցների արդյունքներին:

Կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանը ներկայացրել է իր նկատառումները տեսչական ստուգումների մասին (տես՝ էջ 7):

Փոխնախարար Ս. Համբարձումյանը ներկայացրել է ԼՂՀ կառավարության կողմից տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաները գերակա ծյուղ համարելու որոշման ուղղությամբ ուսումնական հաստատություններում կատարված և կատարվելիք քայլերի, դպրոցներում ՏՏ բազան համալրելու ու թարմացնելու, այդ կապակցությամբ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության մասին (տես՝ էջ 7):

Խորհրդաժողովներն ամփոփել է ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա ԱՍՐՅԱՆԸ: Ստորև ներկայացնում ենք նախարարի դիտարկումները, որոնք ելակետային դրույթներ են պարունակում մանկավարժական կոլեկտիվների կողմից նախարարության որդեգրած գլխավոր գծի՝ ուսման որակի բարձրացման իրականացման ուղղությամբ:

Մեր դպրոցներում բավականին աշխատանք են կատարում կրթության բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Սակայն այն դեռևս մեզ չի բավարարում, ասել է ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը: Բայց կարևորն այն է, որ տարեցտարի որոշակի առաջընթաց է արձանագրվում ոլորտում: Եթե յուրաքանչյուր ուսուցիչ, դպրոց, ղեկավար համարելով միտոսը տարիների կատարած աշխատանքները, թեկուզ մեկտոկոսյա առաջընթաց է արձանագրում, ուրեմն այդ աշխատանքները գտնվում են բոլորի ուշադրության կենտրոնում:

Բարեփոխումները, որոնք սկսվել են 2005 թվականից, մշտական գործընթաց են, և դժվար է կանխանշել, թե երբ կավարտվեն: 12-ամյա կրթության գործընթացով այժմ դեռ ունենք 9-րդ դասարանցիներ: Որոնք են, որ բարեփոխված ծրագրերին համապատասխան կրթություն են ստանում: Ամենակարևորն այն է, որ խնդիրն առաջադրված է, և այս խնդրի իրականացման ուղղությամբ նախարարությունը և կրթության բաժինները մանկավարժների հետ համատեղ կոնկրետ աշխատանքներ են իրականացնում: Այդ աշխատանքում, որպես կարևորագույն հիմնաքար, կրթության արդյունավետության և որակի բարձրացման խնդիրն է դրված, որը բավականին տևական աշխատանք է:

Նախարարն այնուհետև կանգ առավ այն կետերի վրա, որոնց իրականացմամբ խնդիրները լուծվում կստանան:

Ստուգումները ցույց են տվել, որ ուսուցիչների նշանակած միավորների 50 տոկոսն էլ չի պահպանվում: Պետք է կարողանալ երեխաներին մատուցել գիտելիքներ և դրանք ճիշտ գնահատել: Իսկ այդ ամենը կախված է նրանից, թե ուսուցիչն ինչպես է նախապատրաստվում դասին, ինչպես է գործընթացն իրականացնում: Ոչ մեկ անգամ է ասվել, որ մինչև ուսուցիչը չունենա իր սեփական մեթոդական դարբնոցը, նա չի կարող պատշաճ արդյունքի հասնել: Ցանկության դեպքում յուրաքանչյուր ուսուցիչ կարող է սեփական մեթոդական դարբնոցը ձևավորել՝ ներդնելով այն առաջավորը, ինչը երաշխավորվում է: Դրան կնպաստի ինչպես գերատեսչության կողմից տրվող մեթոդական գրականությունը, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները: Պարզապես ուսուցիչը պետք է այս հարցերին մոտենա ստեղծագործաբար, կարողանա կիրառել ու արդյունք հետապնդել:

Լինում են դեպքեր (հատկապես դասայսման ժամանակ), երբ մանկավարժը գիտական տեսակետից

հոյակապ դաս է վարում, բայց կլիպսով դեռում ինքն է հանդես գալիս ամբողջ դասի ընթացքում, իսկ երեխաների ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքը դասապրոցեսում և դրանից դուրս չի երևում: Նման դեպքում ուսուցիչը հաջողության հասնել չի կարող:

Այսօրվա աշակերտը սկզբունքորեն տարբերվում է 10 տարի առաջվա աշակերտից: Նա բավականին տեղեկացված է և ցանկության դեպքում, եթե օգտվի համացանցից ու լրացուցիչ գրականությունից, ինչ-որ հարցում կարող է նաև գերազանցել ուսուցիչին: Աշակերտն էլ այսօր ունի պահանջներ ուսուցչի նկատմամբ: Եվ պետք է նրանց հետ վարվել իրենց համար ընդունելի մեթոդներով ու ձևերով: Աշակերտի նկատմամբ կոպտությունը, բռնությունը արդեն չեն անցնում: Ս. Ասրյանը չքաքցեց, որ այսպիսի երևույթներ կան, հատկապես՝ Ստեփանակերտ քաղաքի դպրոցներում, ինչի կապակցությամբ բողոքներ են հասնում իրեն:

Այս ուսումնական տարվա վերջում եղան բազում դեպքեր, երբ մինչև 240 ժամ բացակայություններ ունեցող աշակերտները նախարարի թույլտվությունն են հայցել համձնելու քննություններ և փոխադրվելու հաջող դասարան: Նման կարգ սահմանվել է՝ հաշվի առնելով երեխաների հնարավոր հիվանդությունների կամ տարբեր մրցումների ու միջոցառումների մասնակցելու դեպքերը: Բայց ի՞նչ է ստացվել՝ զգալի թվով աշակերտներ ու նրանց ծողները ինքնահագասացել են, որ օգտվելու են նախարարի թույլտվությունից: Ս. Ասրյանը հայտարարեց, որ այլևս չի լինի նման բան: Բանի որ ուսումնական տարին նոր է սկսվում, մանկավարժները պետք է հետևեն, որ աշակերտները ներկա գտնվեն դասերին:

Ս. Ասրյանը անդրադարձավ նաև երկտարեցուրսությանը, ինչը խորհրդաժողովներում արծարծել են ելույթ ունեցողները: Նախարարի տեսակետը հետևյալն է. եթե երեխան հաճախում է դպրոց, ինքը կողմնակից է, որ նա դասարանից դասարան փոխադրվի: Մանկավարժական առումով բոլորն էլ համոզվել են, որ երկտարեցուրսությունը ոչ մի արդյունք չի տալիս: Միգուցե հետագայում հասնեն նրան, որ աշակերտին նույն դասարանում թողնելը կատարվի աշակերտի և ծողի ցանկությամբ՝ դասընթացը կրկնելու համար: Գործող կարգով մեկ-երկու առարկայից 1-3 միավոր ունեցող աշակերտին թույլատրվում է փոխադրվել պայմանական ընթացքում դասընթացը հանձնելու պայմանով: Այսինքն՝ քաղաքականությունը գնում է նրան, որ պայման-

ներ ստեղծվեն՝ հիմնական կրթությունն ապահովելու համար: ԳՂ-ում մեխանիզմ է ներկայացվել Ազգային ժողով՝ պարտադիր միջնակարգ կրթության անցնելու մասին: Դա ինքնին որոշակի խնդիրներ է առաջ բերելու: Անցած տարվա հետազոտություններով՝ 9-րդ դասարանն ավարտածների 5 տոկոսն է, որ ոչ մի տեղ չի սովորում: Իսկ չէ՞՞՞ որ 9-ամյակն ավարտելուց հետո նրանք կարող են սովորել արհեստագործական ուսումնարաններում, միջին մասնագիտական հաստատություններում, ավագ, միջնակարգ դպրոցներում: Այստեղ էլ առաջ է գալիս մասնագիտական կողմնորոշման հարցը՝ ճիշտ որոշել յուրաքանչյուրի սովորելու աստիճանը:

Կարելի է ասել, որ այս 3 օղակների ընդունելությունը կանոնակարգվել է: Առաջին տարին, երբ բացվեցին ավագ դպրոցներ, բոլորը համատարած ուզում էին սովորել այնտեղ, հիմա շրջանավարտների մոտ 40 տոկոսն է, որ գնում է ավագ դպրոց: Մյուսներն ընտրում են մնացած տիպի ուսումնական հաստատությունները:

Երբ 12-ամյա կրթության անցնելու կապակցությամբ ստեղծվեցին ավագ դպրոցներ, դրանով բնավ չնստացվեց հիմնական դպրոցի դերը: Եվ հիմնական դպրոցի խնդիրն է տարրական ու միջին օղակներում խոր և կայուն գիտելիքներ ապահովել: Իհարկե, ավագ դպրոցները առանձնահատուկ ուշադրության մեջ են, և նախարարության կողմից պահանջ է ներկայացվել այդ դպրոցների մանկավարժական կոլեկտիվներին, որ իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարեն և ավագ դասարաններ ընդունված աշակերտներին ներգրավեն կրթության մեջ: Բայց այդ երեխաները զալիս են հիմնական դպրոցներից: Ոչ մի 9-րդ դասարանցի չի կարողացել ստանալ գերազանցության մուշի վկայական: Իսկ սա նշանակում է, որ հայոց լեզուն և մաթեմատիկա առարկաներից, որոնց քննությունները վերահսկում է ԳԹԿ-ն, ուսուցիչների նշանակած գնահատականները նման երեխաների նկատմամբ չեն պահպանվել, ոչ մի աշակերտ չի կարողացել 18-20 միավոր ստանալ այդ երկու առարկաներից: Սա հիմնական դպրոցներին խորհելու տեղիք է տալիս, դրանից է կախված նաև հետագայում մեղալակիր ունենալու հանգամանքը:

ԿԳ նախարարը ընդգծեց արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման գործընթացի կարևորությունը: ՄՊԱԿ-ներում, երաժշտական, արվեստի դպրոցներում, մարզադպրոցներում, դպրոցներում գործող խմբակներում ընդգրկված են բավական թվով երեխաներ (հատկա-

պես քաղաքներում), որոնք ակտիվ մասնակցում են իրենց դրական հետքն են թողնում դպրոցական ցանկացած միջոցառման վրա: Անշուշտ, այդ ամենը նպաստում է նրանց անձի ձևավորմանը: Այսինքն՝ արտադպրոցական, արտադասարանական և ուսումնական գործընթացները պետք է կարողանան փոխկապակցված իրականացնել խնդիրները:

Նախարարի խոսքով, լուրջ խնդիրներ կան ծնողների հետ աշխատանքում: Կան անհուսալի, ծնողագուրկ ընտանիքներ, որոնց հետ պետք է անհրաժեշտ աշխատանք տանել: «dasar.am» կայքը պետք է ծառայեցնել այդ նպատակին. ծնողների հետ անմիջական կապը լինի, որպեսզի տարեվերջին ծնողը չասի, որ չի իմացել, թե իր երեխան չի հաճախել դպրոց, կամ չի իմացել, որ 2-3 առարկաներից անբավարար գնահատականներ է ունեցել: Ներդպրոցական վերահսկողությունը պետք է լինի պահանջվող մակարդակի վրա: Յուրաքանչյուր դպրոցի ղեկավար շատ լավ է իմանում իր դպրոցի թերությունները և պետք է աշխատի դրանց վերացման ուղղությամբ:

Առարկայական օլիմպիադաների մասին. երեք տարի է՝ ամենալավ ցուցանիշները ֆիզմաթ դպրոցին են: Դա այն բանի շնորհիվ, որ այստեղ հետևողական աշխատանք են տանում: Ճիշտ է, նաև պայմաններն են նպաստում, բայց բոլոր դեպքերում, իրոք, լուրջ աշխատանք է կատարվում: Իսկ ինչո՞ւ չի կարելի ավագ դպրոցների բնագիտամաթեմատիկական հոսքի աշակերտների հետ նման աշխատանքներ իրականացնել: «Չկա նախաձեռնություն: Հատկապես հ. 8 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը բավականին պասիվ է: Իսկ 11-րդ դպրոցը հիմնականում հումանիտար ուղղվածության առարկաների գծով է որոշակի հաջողությունների հասնում»,- ասաց Ս. Ասրյանը:

Ընդհանուր առմամբ, առարկայական օլիմպիադաներից որոշակի հաջողություններ ունենք: ԳՂ եզրափակի փուլում մեր աշակերտներն ավելի քան 30 տեղ եր են զբաղեցրել: Սա գոհացուցիչ է, բայց այստեղ էլ մեր պահանջներն ունենք: Առայժմ մեր երեխաները ԳՂ եզրափակի փուլում չունենցան այնպիսի արդյունքներ, որ ընդգրկվեն միջազգային օլիմպիական թիմերի կազմում: Սա, այսպես ասած, ապագա բնագիծ է, որ մեր մասնագետները այս ուղղությամբ պետք է աշխատեն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի մատուցումն են որոշակի հաջողություններ: Հարկավոր է շարունակել և հետևել, որ նման կարգի երեխաների հետ համապատասխան աշխատանքներ տարվեն, և այն փաստերը, որ որոշ աշակերտներ ներառվելով՝ արդեն կարողանում են ուսուցանվել հանրակրթական ծրագրերով, տեղափոխվել սովորական դասարաններ, արդեն խոսում է դրական արդյունքների մասին:

Ս. Ասրյանը շոշափեց նաև դպրոցների կարգավիճակի հարցը: Որոշման նախագիծ է ներկայացվել կառավարություն, համաձայն որի՝ Ստեփանակերտի և շրջակայքում գործող դպրոցները կունենան ՊՈԱԿ-ի կարգավիճակ: Այսինքն՝ դպրոցներին ինքնուրույնություն է տրվում, որպեսզի իրենց ֆինանսատնտեսական գործունեությունը ինքնուրույն վարեն: Դա երկի եկող տարվա հունվարի 1-ից կլինի, իսկ շրջաններում հավանաբար կլինեն ՊՈԱԿ-ներ միության ձևով, որը ընդհանրացված ձևով կիրականացնի նրա կազմի մեջ մտնող դպրոցների ֆինանսատնտեսական գործունեությունը:

Նախարարն անդրադարձավ նաև մանկավարժական կարգերին: Ի՞նչ է սպասվում տաս տարի հետո՞՞՞: Այսպես շարունակվելու դեպքում: Բուհերում մանկավարժական մասնագիտություններ ընտրում են միջին գիտելիքների տեր սովորողները: Հատկապես դա ակնառու է բնագիտական առարկաների գծով. չնայած անցյալ տարի արտոնություն էր սահմանվել ֆիզիկա, մաթեմատիկա և քիմիա մասնագիտությունների գծով երկու մրցութային քննությունների փոխարեն մեկ մրցութային քննությամբ անվճար ուսուցման համակարգ ընդունվելու համար, բայց էլի քիչ թվով դիմորդներ ընդունվեցին:

Մեկ տխուր փաստ էլ է նկատվել. տարիներ շարունակ հայոց լեզուն և գրականություն ու պատմություն մասնագիտությունների գծով մրցույթ էր լինում, իսկ այս տարի, առանձնապես պատմություն քննությունից անհաջող արդյունքներ ունենալու պատճառով, չհամարվեցին նաև այս մասնագիտությունները: Հետևությունը մեկն է՝ լավ ուսանած աշակերտը չի ընտրում մանկավարժի մասնագիտությունը:

Նախարարը հետևյալ դիտարկումն արեց. մոդայիկ են դարձել տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն մասնագիտությունները: Բայց նաև ծնողների, շրջանավարտների մոտ համոզմունք է առաջացել, որ այդ մասնագիտություններով սովորելու դեպքում հետագայում աշխատանք գտնել չեն կարողանա: Ս Ասրյանը խորհուրդ տվեց պահել օգտագործել և շրջանավարտներին կողմնորոշել դեպի մանկավարժությունը:

Նախարարն անդրադարձավ նաև մանկավարժի հեղինակության խնդրին: Հայտնի է, որ աշակերտն ավելի շատ սիրում է այն առարկան, որը դասավանդում է իր սիրած ուսուցիչը: Բայց կան ուսուցիչներ, որ մանկավարժի մասնագիտության նկատմամբ հակակրանք են առաջացնում աշակերտների մոտ: Նախարարը փաստեր ունի, թե երեխաները որ ուսուցիչներից են դժգոհ, հատկապես այն առումով, որ լիարժեք դասեր չեն տալիս: Կամ այնպիսի պահանջներ են ներկայացնում, որը յուրահատուկ է աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների, կամ էլ ստիպում են գնալ իրենց մոտ կրկնուսուցման: Պետք է նման մեթոդների դիմել: Ուսուցիչը պետք է այնքան հետաքրքիր դասավանդի, որ աշակերտն ինքը ձգտի գնալ նրա մոտ լրացուցիչ գիտելիքներ ստանալու:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրները նախկինում էլ դրված էին դպրոցների առջև, հատուկ գրույցներ ու դասընթացներ էին կազմակերպվում այդ ուղղությամբ: Սա ոչ մի անգամ մանկավարժական կոլեկտիվներից չի վերցվել: Մեր պետությունը՝ որպես ագրարային երկիր, ագրարային մասնագետներ են անհրաժեշտ, մեր բանակը սպայական անձնակազմի համալրման խնդիր ունի, և հենց այս մասնագիտությունների գծով պիտի լինի շրջանավարտների առաջնահերթ ընտրությունը:

Նախարարը տեղեկացրեց, որ «Հանրակրթության մասին» օրենքով թույլատրվում է միջին մասնագիտական կրթություն ունեցող մանկավարժներին աշխատել մինչև 2018թ. օգոստոսի 20-ը: Այս տարի հեռակա ուսուցման կարգում փոփոխություն է մտցվել և թույլատրվում է միջին մասնագիտական կրթություն ունեցող մանկավարժներին շարունակել իրենց ուսումը բուհերում՝ սկսած 3-րդ կուրսից: Այն դպրոցում, որտեղ այդպիսի ուսուցիչներ կան, պետք է դիմեն բուհերի համապատասխան բաժիններ:

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄԸ ՊԵՏԶ Է ԾԱՌԱՅԻ ՆՊԱՏԱԿԻՆ




ԼՂՀ ԿԳ փոխնախարար Սիբայել ՉԱՍԲԱՐՉՈՒՄՅԱՆԸ

Օգոստոսյան խորհրդաժողովներում ընդհանուր գծերով ներկայացրեց հանրակրթական դպրոցներում տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացում: Ոլորտն ունի համակարգիչների տեխնոլոգիայի վերազինման խնդիր, որը նախարարության հնարավորությունների սահմաններում կատարվում է: Այդ հարցում այս տարի մեծ օգնություն է ցուցաբերել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ տրամադրելով 170 համակարգիչ, որոնք բաշխվել են դպրոցներին: Սակայն այս վերազինումը ինքնամատակամարտ չպետք է լինի: Կան դպրոցներ, որտեղ համակարգիչները հանդիսանում են ոչ թե գիտելիքի մատչելիությունը, հասանելիությունը ապահովող սարքեր, այլ որպես կահույքի մաս: Սա խնդիր է: Խորհրդաժողովներում բարձրացված՝ համակարգիչների բացասական ազդեցության, մասնավորապես, երեխաների կողմից անթույլատրելի կայքերից օգտվելու հնարավորության մասին փոխնախարարը հետևյալն ասաց. «Մենք ունենք կարգերի խիստ պակաս և ունենք նաև որոշ տնօրենների վերաբերմունք օպերատորի հաստիքի նկատմամբ»՝ նկատի ունենալով, որ տնօրենները դա դիտում են ոչ թե մասնագետի համար հատկացված հաստիք, այլ որպես իրենց բարեկամական-ընկերական շրջապատից որևէ մեկին նյութական օժանդակություն ցույց տալու միջոց: Եվ եթե իրենց տեղում լինեին մասնագետները, չէր լինի անհանդուրժելի կայքերը երեխաներին հասանելի լինելու խնդիրը, որովհետև մասնագետը կարող է դնել արգելափակող ծրագրեր: Դպրոցում այդ գործընթացը կարելի է հեշտ իրականացնել, ու կարելի է նաև նույնը խորհուրդ տալ ծնողներին: Մ. Համբարձումյանը նշեց, որ ունեն նաև տեխնիկական սպասարկման խնդիրներ: Ստեփանակերտում համացանցի հասանելիության խնդիրներ չկան, նույնը չի կարելի ասել շրջանների մասին: Այս համատեքստում անդրադառնալով «dasar.am» կայքին՝ ասաց, որ այդ ցանցին միանալը նաև իր հետ բերում է համացանցի անհանդուրժելի կայքերին դիմակայելու միջոցներ, որովհետև այնտեղ սոցիալական ցանցերից ընդօրինակված խաղեր են դրված, որոնք բերում են ոչ թե համացանցային, ոչ թե սոցիալական ցանցերի անհանդուրժողականությունը, այլ երեխաներին բերում են դեպի ինտելեկտուալ աշխարհ: «dasar.am»-ը կրեթի մաս ուսուցիչների դրած գնահատականների թափանցիկությունը, ծնողների համար կիեշտացնի իրենց երեխաների դպրոցական կյանքի վերահսկումը: Համացանցային միջոցառումներին Արցախի դպրոցականների մասնակցությունը տարեցտարի աճում է, մասնավորապես, «Դիջիթեթին», «Էկոտուրին»: Արդեն ունենք երեխաներ, որոնք մասնակցում են առցանց օլիմպիադաներին: Նրանք դեռ հատուկ են, ընդամենը 2 հոգի՝ ֆիզմաթ դպրոցից, որոնք մասնակցեցին Մոսկվայի տնտեսագիտական բարձրագույն դպրոցի կազմակերպած առցանց օլիմպիադային և համապատասխան միավորներ վաստակելով՝ իրավունք ունեցան մասնակցելու այնտեղ կազմակերպած (առաջ անցնելով ժամանակից) գարնանային դասընթացին: Առարկայական օլիմպիադաներին մասնակցության առումով ունեցանք քանակական աճ, բայց այս աճը դեռ որակական աճ չի բերում: Քանակական աճը ապահովվում է մի քանի առարկաներից, այն էլ՝ հունանիստար, իսկ բնագիտական առարկաներից մնան աճ չունենք: Հիմնականում մասնակցում են նույն երեխաները: «Մի՞թե մյուս երեխաները հնարավորություն չունեն: Ինձ թվում է, ունեն, պարզապես որոշ ուսուցիչների մակարդակը թույլ չի տալիս նրանց ի հայտ բերել», - ցավով արտահայտվեց փոխնախարարը: Այս տարի մասնակիցներ ունեցանք նաև բնագիտական համահայկական օլիմպիադայից, որին մասնակցեցին 11 դպրոցականներ, որոնցից 9-ը՝ ֆիզմաթից: Նրանք բերեցին 7 մրցանակ: Մեր մասնակցությունը «Կենդանուր»-ին» այս տարի նույնպես աճել է և՛ աշխարհագրական, և՛ թվաքանակի առումով: Եթե անցյալ տարի միջին միավորները կազմում էին 35-36, ապա այս տարի 43-44 միավոր է: Եթե անցյալ տարի չունեինք 100 միավորի սահմանը հատած երեխաներ, այս տարի ունեցանք 2 հոգի, որոնք դարձյալ ֆիզմաթ դպրոցից էին: Նրանցից մեկը՝ Տիգրան Հակոբյանը, օրերս մասնակցում էր ՀՀ նախագահի ընդունելությանը: Մեր երեխաները հաջողությամբ մասնակցում են նաև ռազմամարզական, հայրենասիրական միջոցառումներին: Անշուշտ, և օլիմպիադաները, և այս միջոցառումներն ունեն իրենց նպատակները: Օլիմպիադաները նաև մասնագիտական կողմնորոշման բաղադրիչ ունեն: Մ. Համբարձումյանը տեղեկացրեց, որ ուսումնական ծրագրերում էական փոփոխություններ չկան, կան մասնակի փոփոխություններ, որոնք տեղադրված են edu.am կայքում, զետեղված են նաև տեղեկագրում, որոնք շուտով դպրոցները կստանան:

նր, այլ երեխաներին բերում են դեպի ինտելեկտուալ աշխարհ: «dasar.am»-ը կրեթի մաս ուսուցիչների դրած գնահատականների թափանցիկությունը, ծնողների համար կիեշտացնի իրենց երեխաների դպրոցական կյանքի վերահսկումը: Համացանցային միջոցառումներին Արցախի դպրոցականների մասնակցությունը տարեցտարի աճում է, մասնավորապես, «Դիջիթեթին», «Էկոտուրին»: Արդեն ունենք երեխաներ, որոնք մասնակցում են առցանց օլիմպիադաներին: Նրանք դեռ հատուկ են, ընդամենը 2 հոգի՝ ֆիզմաթ դպրոցից, որոնք մասնակցեցին Մոսկվայի տնտեսագիտական բարձրագույն դպրոցի կազմակերպած առցանց օլիմպիադային և համապատասխան միավորներ վաստակելով՝ իրավունք ունեցան մասնակցելու այնտեղ կազմակերպած (առաջ անցնելով ժամանակից) գարնանային դասընթացին: Առարկայական օլիմպիադաներին մասնակցության առումով ունեցանք քանակական աճ, բայց այս աճը դեռ որակական աճ չի բերում: Քանակական աճը ապահովվում է մի քանի առարկաներից, այն էլ՝ հունանիստար, իսկ բնագիտական առարկաներից մնան աճ չունենք: Հիմնականում մասնակցում են նույն երեխաները: «Մի՞թե մյուս երեխաները հնարավորություն չունեն: Ինձ թվում է, ունեն, պարզապես որոշ ուսուցիչների մակարդակը թույլ չի տալիս նրանց ի հայտ բերել», - ցավով արտահայտվեց փոխնախարարը: Այս տարի մասնակիցներ ունեցանք նաև բնագիտական համահայկական օլիմպիադայից, որին մասնակցեցին 11 դպրոցականներ, որոնցից 9-ը՝ ֆիզմաթից: Նրանք բերեցին 7 մրցանակ: Մեր մասնակցությունը «Կենդանուր»-ին» այս տարի նույնպես աճել է և՛ աշխարհագրական, և՛ թվաքանակի առումով: Եթե անցյալ տարի միջին միավորները կազմում էին 35-36, ապա այս տարի 43-44 միավոր է: Եթե անցյալ տարի չունեինք 100 միավորի սահմանը հատած երեխաներ, այս տարի ունեցանք 2 հոգի, որոնք դարձյալ ֆիզմաթ դպրոցից էին: Նրանցից մեկը՝ Տիգրան Հակոբյանը, օրերս մասնակցում էր ՀՀ նախագահի ընդունելությանը: Մեր երեխաները հաջողությամբ մասնակցում են նաև ռազմամարզական, հայրենասիրական միջոցառումներին: Անշուշտ, և օլիմպիադաները, և այս միջոցառումներն ունեն իրենց նպատակները: Օլիմպիադաները նաև մասնագիտական կողմնորոշման բաղադրիչ ունեն: Մ. Համբարձումյանը տեղեկացրեց, որ ուսումնական ծրագրերում էական փոփոխություններ չկան, կան մասնակի փոփոխություններ, որոնք տեղադրված են edu.am կայքում, զետեղված են նաև տեղեկագրում, որոնք շուտով դպրոցները կստանան:

ՈՐՊԵՍՉԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՆԹԱՆԸ ԶՎԵՐԱԾՎԻ ՊԱՐԶԱՊԵՆ ՓՈՓՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՆԹԱՆԻ



ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության պետ Սոս ԱՐԶՈՒՄՅԱՆԸ


Սոս Արզումանյանը արձանագրած մի քանի հարցերի վրա: Նախ ասաց, որ Ստեփանակերտի դպրոցներում դասալսուների ցուցանիշները որակական մասով բավականին բարձրացել են: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր այն ղեկավարներին, որոնք դասալսուները կատարում են ոչ թե ցույց տալու համար, այլ նպատակային, կատարում վերլուծություն: Չմայած ոչ բոլորի մոտ է ստացվում, համեմայն դեպս, մայրաքաղաքի ցուցանիշները բավականաչափ բարձր են, այդ պատճառով էլ ոչ մի դասալսու «անբավարար» չի գնահատվել: Այնուամենայնիվ այստեղ էլ կան բացեր, որոնք մատնանշեց տեսչապետը: Դասալսուները պետք է ծառայի իր նպատակին՝ որպես ներքին ստուգումների իրականացման հիմնական ձև: Ս. Արզումանյանը անդրադարձավ ներքին ստուգումներին՝ ասելով, որ ԿՊՏ-ն, որն ունի ընդամենը 15 հաստիքային միավոր, իրականացնում է ստուգումներ ավելի քան 250 կրթական հաստատություններում, ի վիճակի չէ հաճախակի, ինչպես ոմանք են տեղերից պահանջում, լինել տեղերում, ստուգել, օգնել, վեր հանել թերություններն ու բացթողումները, ուղղություն տալ և այլն: Այդ պատճառով էլ կարևորվում են տեղերում իրականացվող ներքին ստուգումները տնօրենների, փոխտնօրենների, մեթոդիկավորման նախագահների կողմից: Այդ ստուգումները պարտադիր պետք է դարձնել ուսումնասիրության առարկա: Ստուգումների արդյունքում ազատվել են 2՝ Ասկերանի շրջանի Հարավի և Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղերի դպրոցների տնօրենները: Նրանց գործունեության մեջ հայտնաբերվել է պաշտոնեական դիրքի չարաշահման դեպքեր (դիպլոմի կեղծում): Վերջին տարիներին, երբ սկսվել է ուսուցիչների ատեստավորման գործընթացը, տեսչության պատասխանատվությունը ավելի է բարձրացել: ԿՊՏ տեսուչներից պահանջվում է հնարավորինս օբյեկտիվ գնահատել յուրաքանչյուր ուսուցիչի աշխատանք, որովհետև այդ գնահատականից շատ դեպքերում կախված է նրանց հետագա ճակատագիրը: Բավական է «անբավարար» գնահատեն, և նա ազատվում է աշխատանքից (այս տարի մնան 2 դեպք է եղել, մեկը՝ ստուգումներից անմիջապես հետո, մեկը՝ ատեստավորման արդյունքերով): Գործընթացը ընթերցել, եզրահանգումները ի մի բերել մանկավարժական խորհրդի միտերում: Նա կանգ առավ ստուգումներ

ուսուցչի աշխատանքը: Տեսչապետը մի քանի հարցերի վրա ևս մանկավարժների ուշադրություն հրավիրեց: Ինքնակրթություն: Այս գործընթացը կաղում է: Համացանցը օգնում է, բայց ուսուցիչները հաճախ այնտեղից վերցնում են պատրաստի մշակումներ, զեղեցիկ ձևավորած ներկայացում տնօրենին, բայց չեն տիրապետում դրանց բովանդակությանը: Նա կոչ արեց ձևական չմոտենալ դրան: Դպրոցներում հաղթահարված չէ անտարբերության մթնոլորտը: «Եթե ուսուցիչը մտնում է դասարան՝ իմանալով, որ իր բացատրությունից հետո աշակերտը դասը լավ չի հասկացել, և ինքը դասարանից դուրս է գալիս հանգիստ հոգով, ուրեմն դպրոցը նրա տեղը չէ», - այս կարծիքին է տեսչապետը՝ ավելացնելով, որ ցավոք, կան մնան ուսուցիչներ, որոնց նկատմամբ պետք է ավելի պահանջվոտ լինել: Մանկխորհրդի մասին: Արդյո՞ք բոլոր դպրոցներում մանկավարժական խարհուրդները ծառայում են իրենց նպատակին: Մանկխորհրդի խորհրդակցական մարմին է, այստեղ պետք է լինեն մտքերի բախում, քննադատություն, ինքնաքննադատություն, զեկուցումներ, ելույթներ, որոշումներ: Որոշ դպրոցներում կա, որոշ դպրոցներում մատների արանքով են մայում սրան, - նկատեց տեսչապետը: Պատասխանատվություն և կատարողական կարգապահություն: Ստուգումների վերջում տեսչական հանձնաժողովը հանձնարարականներ է տալիս, պահանջում դպրոցի ղեկավարներից ուսումնական տարվա ավարտին նախարարություն ներկայացնել տեղեկանք հանձնարարականներից կատարման ընթացքի մասին: Եվ ինչ է պարզվել, ստուգված 43 դպրոցներից միայն 6-ն է ներկայացրել: Ինչո՞ւ է այդպես, «որովհետև մենք նորից չենք զանգել, հիշեցրել: Դա խոսում է այն մասին, որ որոշ դպրոցներում կատարողական կարգապահությունը ցածր է», - եզրակացրեց Ս. Արզումանյանը: Եզրափակելով խոսքը, նա ասաց, որ սերտ կապի մեջ են կրթության բաժնիների հետ, փորձում են ձեռք ձեռքի տված լուծել բարձրագույն հարցերը: Իր կողմից խոստացավ այդ աշխատանքներն ավելի բարձր մակարդակով անել, բայց և լինելու են ավելի պահանջվոտ, որպեսզի բարեփոխումների գործընթացը չվերածվի պարզապես փոփոխությունների գործընթացի:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստեփանակերտի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանի հաշվետվությունը



2013-2014 ուստարում 3 աշակերտ ստացել են/ : 35 աշակերտ, նախորդ ուսումնականի 46-ի փոխարեն, մնացել նույն դասարանում՝ 2 աշակերտ /նախորդ ուսումնականում՝ 1 աշակերտ/ :

Կյս ուսումնականում 12-րդ դասարանի 337 շրջանավարտից քննությունների առաջին փուլի արդյունքով միջնակարգ կրթության ատեստատ է տրվել 285 շրջանավարտի: Ունեցել ենք մեդալի հավակնող 2 շրջանավարտ /ֆիզմաթ դպրոց/, որոնց հաջողվել է քննությունների ժամանակ պահպանել գերազանցությունը և ստանալ հատուկ մեդալի միջնակարգ կրթության ատեստատ՝ պարգևատրվելով նաև մեդալով:

Կյսոր կրթական համակարգում տեղի ունեցող լուրջ փոփոխություններն ուղղված են ինչպես համակարգի ներքին առողջացման, այնպես էլ միջազգային ասպարեզում մեր երկրի կրթության որակը ընդունելի և ճանաչելի դարձնելուն: Այս տեսակետից կարևորվում է ԳԹԿ-ի կողմից անցկացվող կենտրոնացված քննությունները, արտաքին և ներքին ստուգումները:

Ինչպես գիտեք, այս ուսումնականում 4-րդ դասարանի «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների գիտելիքների ստուգումը 1-ին անգամ անց է կացվել ԳԹԿ-ի կողմից կազմած միասնական թեստերով: Արդյունքում՝ 4-րդ դասարանի 701 աշակերտից գիտելիքների ստուգման 1-ին փուլում հաջողություն են ունեցել և փոխադրվել հաջորդ դասարան 695 աշակերտ, 4 աշակերտ ունեն վերստուգում, իսկ 2 աշակերտ էլ մնացել են նույն դասարանում:

Միասնական թեստերով ստուգումների կազմակերպումը, ըստ ինձ, ցանկալի է, բայց երեխաների փաստացի գիտելիքների մակարդակը վեր հանելու համար ավելի նպատակահարմար է թեստերը կազմել աշակերտների կողմից ոչ ամենօրյա օգտագործվող թեստաշարերից:

Ըստ կենտրոնացված քննությունների՝ մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանցիների արդյունքները հետևյալն են. «Մաթեմատիկա» առարկայից մասնակցել են 649 աշակերտ, որից «ամբավար» են ստացել 8 աշակերտ, որը կազմում է մասնակիցների 1%-ը.

- 8-13 միավոր ստացել են 568 աշակերտ (88%),
- 14-17 միավոր՝ 72 աշակերտ (11 %),
- 18-20 միավոր ստացել է 1 աշակերտ՝ 0%:

«Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել են 647 աշակերտ, որից «ամբավար» են ստացել 8 աշակերտ, որը կազմում է 1%,
- 8-13 միավոր ստացել են 535 աշակերտ (83%),
- 14-17 միավոր՝ 103 աշակերտ (16 %),
- 18-20 միավոր ստացել են 20 աշակերտ (3%):

Պատմություն առարկայից 18-20 միավոր ստացել է 8 աշակերտ, որը կազմում է 1.2%, ռուսաց լեզվից՝ 13 աշակերտ (2%), անգլերենից՝ 9 աշակերտ (1.4 %), բնագիտական առարկաներից՝ 9 աշակերտ (1.4 %) :

Համապատասխան դպրոցներում քննություններ հանձնողների գնահատականները բոլոր առարկաներից դրական են եղել, իսկ կենտրոնացված հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից 21 աշակերտ ստացել են «ամբավար», սա ինչ-որ տեղ խորհելու առիթ է տալիս: Մեր դպրոցների 9-րդ դասարանի շրջանավարտների 3.2%-ը /21 աշակերտ/ քննություններին ժամանակա շեմային միավորը չեն կարողացել հարցանարել: Նրանք վերաքննության արդյունքներով են ապահովել 9-ամյա կրթության վկայական ստանալը:

Մայրաքաղաքի 15 ուսումնական հաստատություններից 6-ում են իրականացվում 12-ամյա կրթություն: Դրանք հ. 8,11 ավագ, հ. 3 միջնակարգ և ֆիզմաթ հատուկ դպրոցները, ռազմամարզական վարժարանն ու պարավետիստի թռիչք հիմնարկներն են:

Հիմնականում «ամբավար» գնահատականներ գրանցվել են միասնական ավարտական մասով, իսկ համապատասխան դպրոցներում քննություններ հանձնողների գնահատականները այնպես, ինչպես 9-րդ դասարանցիների մոտ, բոլոր առարկաներից դրական են եղել: Սա ևս խորհելու առիթ է տալիս, վերլուծությունը թողնում են դպրոցների տնօրինությանը:

Մայրաքաղաքի շրջանավարտները գիտելիքների որակական բարձր մակարդակ են ցուցաբերել՝ հավաքելով 18-20 միավոր՝
- հայոց լեզվից՝ 338 աշակերտից՝ 28 հոգի /8.3%/,
- մաթեմատիկայից՝ 14 աշակերտ /4.1%/,
- պատմությունից՝ 338 աշակերտից 11 -ը /3.3%/,
- ռուսաց լեզվից՝ 211 աշակերտից 10 -ը /4.7%/,
- անգլերենից՝ 128 աշակերտից 30-ը /23.1%/,
- ֆիզիկայից՝ 109 աշակերտից 9-ը /8.3 %/,

- կենսաբանությունից՝ 86 աշակերտից 3-ը /3.5%/,
- քիմիայից՝ 12 աշակերտից 4 -ը/3.3 %/,
- աշխարհագրությունից՝ 142 աշակերտից 5 -ը /3.5 %/ :

Ըստ դպրոցների 18-20 միավոր ստացել են՝
- հ. 3 միջնակարգ դպրոցի 43 շրջանավարտներից հայոց լեզվից ընդամենը 1 շրջանավարտ, պատմությունից՝ 3, աշխարհագրությունից 1, անգլերենից՝ 5, ռուսերենից՝ 2, ռուս գրականությունից՝ 25,

- հ. 8 ավագ դպրոցի 82 շրջանավարտներից հայոց լեզու և գրականությունից՝ 4 հոգի, մաթեմատիկայից՝ 1, պատմությունից՝ 5, աշխարհագրությունից՝ 58 մասնակիցներից 1-ը, անգլերենից՝ 24 մասնակիցներից 3-ը, ռուսերենից՝ 59-ից 2-ը,

- հ. 11 ավագ դպրոցի 148 շրջանավարտներից հայոց լեզու և գրականությունից՝ 14-ը, մաթեմատիկայից՝ 3, պատմությունից՝ 3, աշխարհագրությունից 3, ֆիզիկայից՝ 1, կենսաբանությունից՝ 2, քիմիայից՝ 4, անգլերենից՝ 16, ռուսերենից՝ 3,

- ֆիզմաթ դպրոցի 30 շրջանավարտներից հայոց լեզու և գրականությունից՝ 9, մաթեմատիկայից՝ 10, ֆիզիկայից՝ 8, կենսաբանությունից՝ 1, անգլերենից՝ 6, ռուսերենից՝ 3,

Ցավալի է, որ ռազմամարզական վարժարանի 29 շրջանավարտներից և պարավետիստի թռիչքի 6 շրջանավարտներից ոչ ոքի չի հաջողվել արձանագրել բարձր միավորներ:

Բերված տվյալները հիմք են տալիս նշելու, որ գիտելիքների բարձր որակական մակարդակ են ցուցաբերել հատկապես հ. 11 ավագ և ֆիզմաթ դպրոցի շրջանավարտները:

Ստանդեռ առիթ է տալիս, որ մեր պետական լեզվի՝ հայերենի, գիտելիքների որակական կողմը ընդամենը 8.3 % է կազմում, իսկ անգլերենի որակական կողմը՝ 23.1% :

Սա քանի խոսք առարկայական օլիմպիադաների արդյունքների մասին, որպես այս կամ այն առարկայից առանձնակի հակումներ ունեցող աշակերտների հետ տարվող աշխատանքների:

Ներդրողական փուլում հաղթող ճանաչված 335 աշակերտ մասնակցել են քաղաքային փուլին, որոնցից 59-ը /17.6%/ /նախորդ ուստարում 55-ը/՝ գրավել են մրցանակային տեղեր /6 առաջին, 20՝ երկրորդ, 33՝ երրորդ/, իսկ 41-ը ցուցաբերել են ակտիվ մասնակցություն:

Հանրապետական փուլի 108 մասնակիցներից 27-ը գրավել են մրցանակային տեղեր, որից 3 առաջին տեղ՝ հ. 3, 6, 11, ֆ/մ/, 8 երկրորդ տեղ /հ. 3, 8, 11, ֆ/մ/, 16 երրորդ տեղ /հ.1, 3, 5, 10, 11, ֆ/մ/, իսկ 34-ը /հ. 1, 2,3, 6,8, 11, ֆ/մ/՝ ակտիվ մասնակցություն:

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է հայոց լեզու, հայ գրականություն, քիմիա, աշխարհագրություն, ֆիզիկա, հայոց եկեղեցու պատմություն և նախնական զինվորական պատրաստություն առարկաներից:

Որակական առումով դպրոցներում պատկերը հետևյալն է.

- հայոց լեզու առարկայի 10 մրցանակային տեղերից 3-ը բաժնի է հասել հ. 11 ավագ դպրոցի մասնակիցներին,
- հայ գրականությունից՝ 4 մրցանակային տեղերից 1-ը հ. 11 և հ. 8 ավագ դպրոցների մասնակիցներին,
- ռուսաց լեզվից՝ 4-ը հ. 3 միջնակարգ և հ. 11 ավագ դպրոցների մասնակիցներին,
- պատմություն առարկայից 5 մրցանակային տեղերից 4-ը հ. 8 ավագ դպրոցների մասնակիցներին:

Այս տարի մրցանակային տեղ չունեցանք քիմիա և ինֆորմատիկա առարկաներից, ի դեպ, քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել նաև անցած ուստարում:

Պետք է նշել, որ ուսումնադաստիարակաչական աշխատանքների դրվածքը, ուսման որակը, սովորողների ճնշող մեծամասնության գիտելիքների մակարդակը, դասավանդող ուսուցիչների մի մասի մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության աստիճանն ընդհանուր առմամբ դեռևս չեն գոհացնում:

ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցած մայրաքաղաքի դպրոցների 27 աշակերտից 12-ը գրավել են մրցանակային 1-3-րդ տեղերը /1-ին տեղ՝ 5 աշակերտ, 2-րդ տեղ՝ 3 աշակերտ, 3-րդ տեղ՝ 4 աշակերտ/, ակտիվ մասնակցություն ցուցաբերել 3 աշակերտ՝ արժանանալով դիպլոմների և գովասանագրերի: Մրցանակային 1-ին տեղ զբաղեցրել են ռուսաց լեզվից Անահիտ Բաբայանը /հ. 3/, ՆՉՊ-ից՝ Սամվել Պողոսյանը /հ. 5/, Ալբերտ Աղաջանյանը /հ. 10/, Գուրգեն Դանիելյանը և Սևակ Մովսիսյանը /մ/մ/, 2-րդ տեղ զբաղեցրել են անգլերենից՝ Լարիսա Գևորգյանը և Աննա Կրամանյանը /հ. 11/, Լուսինե Մարտիրոսյանը՝ հայ գրականությունից /հ. 11/, 3-րդ տեղ զբաղեցրել են ռուսաց լեզվից՝ Դինա Գասպարյանը /հ. 3/ և Լուիզա Ներսիսյանը /հ.11/, ֆիզիկայից՝ Սամ-

վել Միրզախանյանը /ֆ/մ/, մաթեմատիկայից՝ Վիկտորյա Միրզախանյանը /ֆ/մ/:

Այս աշակերտների ձեռք բերած հաջողությունների գործում իրենց արժանի ներդրումն ունեն ուսուցիչներ Ջոյա Մարտիրոսյանը /հ. 3/, Արմենուհի համույանը, Հասմիկ Սեյրանյանը, Նարիա Սեյրանյանը /հ. 11/, Սուսաննա Ներսիսյանը, Աշոտ Ապրեսյանը, Վարդգես Գևորգյանը, Ծովինար Բեգարյանը /ֆ/մ/, Արսեն Հարությունյանը /հ. 5/ և Վարուժան Աղաջանյանը հ. 10 դպրոցներից, Անդրեյ Բաղայանը մ/մ վարժարանից:

Այս տարի նույնպես ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից առարկայական օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլում հաղթած և դիպլոմների ու գովասանագրերի արժանացած դպրոցականների և առաջին կարգի դիպլոմակիր աշակերտների ուսուցիչների համար պարգևատրման հանդիսավոր արարողություն տեղի ունեցավ:

Սա կրթության համակարգի նկատմամբ տարեցտարի աճող պետական հոգածության և ուշադրության հերթական վկայությունն է, որը կարծես թե ավանդական է դառնում: Աշակերտների և ուսուցիչների մեծ ձևով ընդունելությունը և խրախուսումը մղում է ավելի լավ գործունեության, ավելի լավ աշխատանքների:

Մայրաքաղաքի դպրոցականները հաջողություններ են ձեռք բերել նաև «Ռուսական արջուկ» և «Կենզուրու» միջազգային մրցույթներում:

Ի մի բերելով առարկայական օլիմպիադաների, տեսչության կողմից անցկացված թեմատիկ և հանրընդհանուր ստուգումների, տրված փորձնական քննությունների, ստուգողական գրավոր աշխատանքների, ինչպես նաև ավարտական և միասնական ու պետական ավարտական քննությունների արդյունքները՝ հաստատվում է ցավալի մի միտում, որ դեռևս շարունակվում է մեր պետական ավարտական քննությունների արդյունքները՝ հաստատական բարձրացում, որը խոչընդոտում է գիտելիքների հիմունքների նկատմամբ սովորողների մրցակցությանը, ցածրացնում է ուսման որակը, բացասաբար անդրադառնում ուսուցիչ-անհատի հեղինակության վրա: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ամենօրյա դասին ներկայանա պատրաստ, զբաղվի իր մասնագիտական ու մեթոդական մակարդակի բարձրացման հարցերով, գերծ մնա դպրոցական ուսուցիչն ոչ վայել արարիքի եւ աշակերտին գնահատի ըստ փաստացի գիտելիքների, դրանով հարգում կլինի եւ աշակերտին, եւ բարձրացրած կլինի իր իսկ հեղինակությունը:

Նոր ուսումնականից դպրոցներում կգործի «Dasaran.am» միջդպրոցական ինտերակտիվ ցանցը, որի առաքելությունն է հանրակրթական դպրոցների արդիականացումն և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ստեղծել կրթության նոր որակ, նպաստելու դրակայ կրթության ապահովմանը և ամրապնդմանը, բարձրացնելու դպրոցների գործունեության և կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ձևավորելու աշակերտներին, ծնողներին և ուսուցիչներին հաղորդակցման ժամանակակից և արդյունավետ համակարգ:

Այս կայքը հնարավորություն կտա իրականացնելու դպրոցի գործունեության արդյունավետ վերահսկողություն, կհամայնակի վերջում ստանալ բոլոր աշակերտների միջին գնահատականները, արագ և արդյունավետորեն հաղորդակցվել ծնողների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԳ նախարարության և ՀՀ Ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպված կարճատև և միամսյա վերապատրաստման դասընթացներին մասնակցել են հանրակրթական դպրոցների շուրջ 121 ուսուցիչներ:

Այս ուսումնական տարում ատեստավորվել են վերապատրաստման անցած 117 ուսուցիչ, որոնք համապատասխանել են իրենց զբաղեցրած պաշտոնին: Հուսանք, որ ատեստավորված ուսուցիչներն ավելի ակտիվ դիրքորոշում և համարվածություն կունենան տարակարգ ստանալու հարցում:

Կարևորելով դասավորությունների դերը թե՛ ներդպրոցական վերահսկողության և թե՛ ուսուցիչների ատեստավորման գործում, նշեմ, որ ուսումնական տարվա ընթացքում մայրաքաղաքի դպրոցների տնօրինությունների կողմից լավել է 7450 դասաժամ, որից տնօրենների՝ 2247 դասաժամ, փոխտնօրենների՝ 4493 դասաժամ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենների տեղակալների՝ 710 դասաժամ և կազմակերպվել դրանց քննարկումներն ու տրվել անհրաժեշտ մեթոդական ցուցումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից համարվում են ստուգման են ենթարկվել մայրաքաղաքի հ. 1, 12 հիմնական դպրոցները և հ. 1 մանկապարտեզը:

Ստուգման արդյունքներով ուսումնադաս-

ՄԱՍԿՈՒՅՑ

ԱՐՅԱՆ ԳԱԼԸ ՀԵՃՏ Է, ՎԵՐԱՊԱՌՆԱԼՆ Է ԴժՎԱՐ

Լրացավ Շուշիի «Վարանդա» մանկական, պատանեկան և երիտասարդական պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Զաքար Քեչիշյանի խմբավարական գործունեության 25-ամյակը, որը համընկավ երգչախմբի 22-րդ տարեդարձին: Ավանդույթի համաձայն՝ ամեն տարի, հավարտ երգչախմբի ամառային աշխատանքի, «Վարանդան» յուրօրինակ հաշվետու համերգով ամփոփում է կատարած աշխատանքը: Այս անգամ էլ բացառություն չեղավ. սեպտեմբերի 3-ին խումբը համերգով հանդես եկավ Շուշիում, իսկ հաջորդ օրը՝ Ստեփանակերտում:

Նով: Մտնում էին, դրամապանակից փող էին հանում, թղթի մի կտոր առնում: Կյանքում առաջին անգամ տեսա, որ մուտքը փողով է՝ տոմսով է: Փողը երեխա էի, դրամ չկար մոտս, ու թեև մեր տունը շատ մոտիկ էր, երևի մտածեցի՝ մինչև գնամ-գամ, ամեն ինչ վերջացած կլինի, մյուս կողմից էլ՝ ամաչեցի գնալ և ասել. «Փող չունեմ, բայց ուզում եմ լսել»: Երբ համերգն սկսվեց, լուսամուտը բաց էր (այն ժամանակ ես այսքան բոլով չէի), կախված լուսամուտից՝ ես ամբողջ համերգը լսեցի, և դա առաջին հանդիպումն էր Նորին Մեծուքյուն երաժշտության հետ»:



Երևի ի վերուստ էր կամխորդված, որ խմբավարության ասպարեզում առաջին քայլերն էլ կապված են նույն երգչախմբի հետ. կոնսերվատորիայի ուսանող էր, երբ 1989 թվականին, վերստեղծելով ծննդավայրի «Վաքալիկ» երգչախումբը, բեմ բարձրացավ Խ. Ավետիսյանի «Մեր աշխարհը» երգով: Հատկանշական է, որ հոբելյանական համերգը նույն երգով բացվեց՝ կամրջելով սկիզբն ու ներկան, սերունդներն ու ժամանակները:

Զաքար Քեչիշյանի հիմնադրած կամ վերստեղծած «Վաքալիկ», «Օիսան», «Շնորհալի», «Կարկաչ», «Այգ» և «Վարանդա» մանկապատանեկան թե երիտասարդական երգչախմբերում սերունդների հերթափոխությանը մինչ այժմ երգել են ավելի քան 1350 պատանիներ ու երիտասարդներ, ուսուցանել և կատարել է 600-ից ավելի խմբերգեր՝ վայելելով նրանց մեծ մասի առաջին կատարումների բերկրանքը: Ինչ վերաբերում է «Վարանդային», հիմնադրության օրվանից երգչախմբում երգել են ավելի քան 400 պատանիներ ու երիտասարդներ, իսկ խումբը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, գորհանցներում, դպրոցներում, ինչպես նաև Հայաստանում ու Լիբանանում:

Խմբավարի նրա աշխատանքի սկզբունքներից մեկն այն է, որ ամեն տարի երգչախումբը նոր համերգային ծրագրով է ողջունում իր հանդիսատեսին: Մտնում է միայն զարմանալ, թե ինչպես են հասցնում երեխաներն այդքան կարճ ժամանակահատվածում յուրացնել այդքան տեքստերն ու երաժշտությունը: «Եթե ես կարողանում եմ յուրաքանչյուր տարի ներկայանալ ձեզ նոր երգացանկով, եթե կարողանում եմ մի մոտ ավելացնել այստեղ, մի քար էլ ես դնել և մաս կազմել ձեր կյանքին, ապա ամենաերջանակն եմ», - բեմից խոստովանեց խմբավարը: Համերգի ժամանակ հաջորդաբար ելույթ ունեցան պատանեկան, ապա մանկական և երիտասարդական կազմերը: Երգացանկն էլ այնպիսի խնամքով էր կազմված, որ տարիքային բոլոր խմբերն էլ սիրով ու ամբաբով հրճվանքով այն մատուցեցին հանդիսականին: Երգացանկի մի կարևոր առանձնահատկություն ևս կուզենայինք հատկանշել. դա հայկական երգագագադուրային արմատավորումն է, ինչին նպաստում են ոչ միայն մեր տաղանդավոր երգահանների մանկական երգերի ուսուցումը, այլև՝ նրանց մշակմամբ ժողովրդական երգերի կատարումները: Սովորույթի համաձայն՝ խմբավարը նաև համերգավարի դերն էր ստանձնել. նա իր խոսքը համեմուն էր երգչախմբի անցած ուղուց հետաքրքիր ու գովելի շարժումներով, այս կամ այն երգի պատմությունը՝ ջերմ ու անմիջական մթնոլորտ ստեղծելով դափնիով և բեմում: Երգչախմբի ավանդույթներից մեկն էլ համերգի ավարտն ազդարարող՝ Ռ. Ամիրխանյանի «Երագի իմ երկիր, հայրենիք» երգն է, որը միշտ կատարվում է լիակազմ և անպայման դափնիով ներկա «Վարանդայի» նախկին սաների մասնակցությամբ:

Զաքար Քեչիշյանի կյանքում տարին նշա-

նավորվում է ևս մի գեղեցիկ հոբելյանով՝ ամուսնության 10-ամյակով: Ուրախությամբ պիտի փաստենք, որ սիրված խմբավարի կյանքի ընկերուհին՝ դաշնակահարուհի Կամիլա Քեչիշյանը, նույնպես մեծ դերակատարություն ունի երգչախմբի ստեղծագործական գործունեության մեջ՝ թե որպես նվագակցող, թե որպես խորհրդատու: Այս անգամ գործերի բերումով Կամիլան չկարողացավ մինչև վերջ մնալ և մասնակցել համերգին, ուստի այս տարվա համերգի երգափունջը իբրև ծաղկեփունջ խմբավարը նվիրել էր տիկնոջը՝ ևս մի անակնկալ մատուցելով դափնիով՝ բոլոր դարերի հայ մեծագույն սիրերգակ Սայաթ-Նովայի երգերի շվիի կատարելով հնչեցնելով նրա պատվին:

Մեզ հետ զրույցում Զ. Քեչիշյանը մանրամասներ հաղորդեց իր քառորդ դարյա խմբավարական գործունեությունից. «Ես առաջին իմ փորձառությունս ունեցած եմ իմ ծննդավայր Այնճարի «Վաքալիկ» երգչախմբի հետ, որտեղ, տակավին երեխա, ես էլ եմ երգել: Հետո մեր խմբավարը ձեռնարկվեց քահանա, գնաց Կիպրոս, և երբ եկա ուսանելու կոնսերվատորիա, ամռան արձակուրդիս վերադառնալիս երգչախումբը: Շատ փառահեղ օրեր էին. երկու համերգ էր նախատեսված մեծ դահլիճում, որոնք վերածվեցին վեց համերգի: Մի խանդավառություն էր, որը ինձ մեղե խմբավարությունը լրջությամբ ընդունելու և խմբավարական անբիռնում էլ սովորելու: «Վաքալիկից» բացի ես ստեղծեցի լիբանանահայ ազգային վարժարաններում «Օիսան» երգչախումբն ու նվագախումբը՝ կատարելով Արեգ Լուսինյանի «Երաժշտական այրուբեն» ներկայացումը՝ բեմադրված տարբերակով: Այնուհետև ես ղեկավարեցի նաև Մեծի Տանն Կիլիկի կաթողիկոսարանի մեծահասակների «Շնորհալի» երգչախումբը, որը ոչ միայն պատարագներ էր երգում, այլև իմ օրով տասնյակ համերգներով հանդես եկանք՝ հայ դասական արվեստը՝ Կոմիտաս, Եկմայան և այլն, ներկայացնելով օտար հանրության: Նույն առաքելության է լծված Լիբանանի իմ «Վարկաչ» մանկական և պատանեկան երգչախումբը, իսկ այնտեղի երեցները կոչվում են «Այգ»՝ խառնաձայն երգչախումբ է, տղաներ էլ կան, մոտավորապես 50 երիտասարդներ, որոնք Լիբանանում արդեն հայտնի երգչախումբ են, ինչպես «Վարկաչը», որովհետև ոչ միայն հայկական, այլև մեծամասամբ օտարների, որոնք «Վարկաչն» ու «Այգը» ճանաչում են իբրև Լիբանանի առաջատար երգչախմբերի՝ մանկականի պարագային՝ առաջինը, իսկ «Այգի» պարագային՝ առաջիններից մեկը: Ես իմնա ղեկավարում եմ «Այգը», «Վարկաչը» և «Վարանդան», և սրանք քույր- երգչախմբեր են: Համացանցի օգնությամբ երեխաները կապվում են միմյանց հետ: Մի անգամ «Վարանդան» Բեյրութ է գնացել, մի անգամ «Վարկաչն» է եկել, այս անգամ Կահիրեի «Արցախ» երգչախումբն էր եկել այստեղ: «Վարանդան» և «Վարկաչը» 3-4 անգամ գնացել են Կիպրոս համերգներ տալու. այդ համերգները աշխուժացնում են երգչախմբերի կյանքը: Դժբախտաբար, այն երազը, որ հայրենիքում կան Լիբանանում անգամ մը ևս իրականություն դառնա միջապահ համերգ տալու գաղափարը, շատ մեծ ծախսերի հետ է կապված»:

Ուրախալի է, որ Զ. Քեչիշյանը երբեք կասկածի կամ զղջումի պահեր չի ունեցել ընտրած ուղու համար. «Այս ճանապարհը ինձ համար եղավ ծաղկառատ և ոչ թե փշուր ու ստատակոտ: Դժվարություններ իհարկե միշտ էլ ունեցել եմ, սակայն կարողանում եմ լավատեսորեն դրանք հաղթահարել: Իմ տխրությունն այն է միայն, որ երկրագունդը տխուր է, մարդը մարդու նկատմամբ զազան է դարձել, ամեն տեղ արհավիրքներ, քառասյին վիճակ, պատերազմ, մարդ են մորթում, այդ բոլորի մեջ գեղեցիկն ու բարին նվազում է, բայց կարծում եմ, որ երգչախումբը, արվեստը ամենամարակուռ զենքերից մեկն է՝ կովելու այդ զազանության դեմ»:

Մեր հարցին՝ ի՞նչ բեկումնային կամ շրջադարձային պահեր են եղել խմբավարի կյանքում, նա ասաց. «Սառից» առաջին տարվա ավարտին էր, երբ արդեն հրաժեշտի համերգ տվեցի՝ տխուր-տրտուն, լացելով, բայց ուրախ եմ, որ բեկումն մը կատարվեց և վերադարձա: Եթե կարողանայի դիմադրել և չգալ, երկի այս շարունակությունը չէր լինի: Հիմնական շրջադարձը դա էր: Երկրորդը՝ երիտասարդականի առաջին կազմի ստեղծումն էր, և երբ «Վարանդայի» ծայնագրու-

թյունը՝ «Բերդաբաղաբ» խտասալիկը, Ամերիկայում մրցանակ չափեց: Դա 10 տարի առաջ էր, այն տարիներին տակավին դժվար էր կյանքը, և երիտասարդական երգչախումբը այդ որակով կրցավ ծայնագրվիլ և ներկայացնալ: Ավելի ուշ բեկումնային էր մանկականի մեր փոքրերի՝ «ցորենի հատիկների» ծնունդը, որ իրենց նախափորձերը կկատարեն այնտեղ և կուզան-կհոսին դեպի պատանեկան, այնուհետև երիտասարդական, անկե հետո ալ, ուրախ եմ ըսել, դեպի հարսանեկան երգչախումբ: Յուրաքանչյուր տարին, յուրաքանչյուր օրը բեկումնային կարելի է համարել արվեստագետի կյանքում. բեկումնային պահեր են, երբ «Վարանդան» Բեյրութ եկավ, կամ «Վարկաչը» Հայաստան եկավ, երգչախմբերը իրար խառնվեցան, երկնքից անձրև տեղաց, ասացինք՝ Աստված պապան էլ լաց եղավ ուրախությունից, կովեցան իրար հետ՝ թե պարոն Զաքարը մե՞րն է, թե՞ ձերն է, ո՞ւմ է ավելի սիրում... Հետո հաշտվեցին և այնպես հաշտվեցին, որ արդեն դժվար եղավ բաժանումը իրարից»:

Սիրելի խմբավարի կերպարը առիթ է դարձել, որ սաներից շատերը հետևեն նրա օրինակին: Նրա հավաստմամբ՝ շատերն են ընտրել երաժշտության ճանապարհը. մեծ մասն իբրև երգիչներ, 4-5-ը՝ խմբավարներ: «Վարկաչում» իր նախաքայլերն արած Րաֆֆին երեք տարբեր երկրներում՝ ոսկե մեդալ, վերջերս Ռիգայում անցկացված երգչախմբային արվեստի մրցույթում՝ արծաթե մեդալ, նախանցյալ տարի Վիեննայում երեք բրոնզե մեդալ նվաճեց. «Սկսեց «Վարկաչից», իմ ուսանողն էր, իետու կոնսերվատորիայում շարունակեց Ռուբեն Ասատրյանի մոտ, հիմա երկու երգչախումբ ունի, հայտնի անուն դարձավ»: Արցախում Վիլյետա Բախշյանն իր առաջին քայլերն սկսեց «Վարանդայի» հետ, այսօր Ստեփանակերտում իր մանկական երգչախումբն ունի, ուրիշ շատերն էլ կոնսերվատորիա ավարտեցին, սակայն, ցավոք, չեն վերադառնում այստեղ այն պարզ պատճառով, որ երգի-երաժշտության ճանապարհով չեն կարող իրենց ընտանիքը պահել, - ավստանքով փաստում է սիրված խմբավարը: Նրանցից յուրաքանչյուրի ձեռքբերումը պարոն Զաքարը նաև իր ձեռքբերումն է համարում, բոլորիս ազգային ձեռքբերումը, նշելով, որ սաների հաջողություններն մեծ ուրախություն և հպարտություն են պարգևում իրեն:

Մեր զրույցի վերջում փորձեցինք ի մի բերել այն հատկանիշները, որոնցով հարկ է, որ օժտված լինի խնկարկալ խմբավարը և ահավասիկ. «Նախ և առաջ պետք է ունենա երաժշտական ունակություններ և պատրաստություն, բայց այդ բոլորը ոչ մի բանի չեն ծառայի, եթե նա չունի մարդկային հատկանիշներ, որոնցով պետք է առաջնորդի երգչախումբը, իր մեջ պիտի լինի մի մագնիս, որ իր շուրջ համախմբի երգողները, սիրցնե ինքզինքն և սիրե իր երգողները»: Իսկը այսպիսին է պարոն Զաքարը, և յուրաքանչյուր համերգից հետո հնչող գնահատանքի խոսքերն ու բարեմաղթանքները, խորհրդանշական նվերներն ու պարգևները դրա վկայությունն են: Այս անգամ ԼՂԶ մշակույթի և երիտասարդության հարցերով փոխնախարար Լեռնիկ Գովհաննիսյանը նախարարության անունից նրան հանձնեց պատվոգրի և հուշանվեր՝ ասելով. «Եթե Զաքար Քեչիշյանի համար Այնճարը ծննդավայրն է, ապա Շուշին նրա հայրենիքն է, որին նա անմնացորդ նվիրված է 22 տարիներ է վեր: Եվ իր առաջին զավակով՝ «Վարանդա» երգչախմբով, 22 տարի զարդարում է Արցախի մշակութային մայրաքաղաքը: Զ. Քեչիշյանի գործը բաժանված է երկու մասի, մեկը՝ Արցախում, մյուսը՝ Լիբանանում: Եվ իր ամեն այցելությանը Շուշիին ինքը հաղորդում է նոր շունչ ու ոգի, իսկ Լիբանանում քարոզում է Արցախի մշակույթը՝ մեր մշակութային դեսպանն է այնտեղ: Նրա ակտիվ մասնակցությամբ բանի տարի է Արցախի մշակութային օրերն են կազմակերպվում լիբանանահայ գաղութում»: Իսկ նախօրեին Շուշիում ԼՂԶ Աժ նախագահ Ա. Դուլյանի կողմից խմբավարը պարգևատրվել էր մեդալով: Նրան փոխանցվեց նաև Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարզա արքեպիսկոպոս Մարտիրոսյանի երախտագիրը, որում բարձր էր գնահատվում նրա գործունեությունը: Ավանդույթի համաձայն՝ երգչախմբի սաներն էլ իրենց նվերն ու բարի խոսքերն ուղղեցին սիրելի խմբավարին՝ հաջորդ ամառ հաստատ հանդիպելու հավատով:

Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐ ՄԵԾ ԼԻՑԷՐ ՄՏԱՅԱԾ

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի մեթոդիստ Անահիտ Մեսրոպյանի նախաձեռնությամբ արդեն ավանդույթ են դարձել ամեն տարի, նոր ուսումնական նախաշեմին, մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների ուսուցիչների այցելությունները ՀՀ տարբեր քաղաքների ու շրջանների տեսարժան վայրեր: Ուսուցիչներին ընկերակցում էին նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցներ, լրագրողներ, ինչպես նաև քաղաքապետարանի կրթության բաժնի մասնագետներ: Օգոստոսի 22-ից 25-ը մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց լինել Հայաստանի հինգ քաղաքների տեսարժան վայրերում:



Մայրաքաղաքից խումբը ճանապարհ ընկավ գիշերվա ժամը 3-ին: Մեր առաջին կանգառը Սևանուն էր. նախ այցելեցինք Սևանավանը՝ աղոթելու Աստծու տանը:



Մեր բախտից արևոտ օր էր, իսկ կապուտաչա գեղեցկուհին ինչպես միշտ՝ անմնամ: Վայելեցինք Սևանը մինչև օրվա առաջին կեսը, այնուհետև խումբը ճանապարհ ընկավ դեպի Ծաղկաձոր, որտեղ ըստ վաղօրոք պայմանավորվածության, մեզ դիմավորեցին մեծ շուքով: Այդ օրը ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ճամբարի հերթական փուլի փակման արարողությունն էր, որին մասնակցում էր նաև արցախցի դպրոցականների խումբը: Ու քանի որ դեռ ժամանակ կար մինչև փակման հանդիսավոր արարողությունը, այցելեցինք Կեչառիսի վանական համալիրը (XI-XIII դդ.): Ի դեպ, ի պատիվ արցախցիներիս՝ հնչեցրին եկեղեցու զանգերը:



Հոգևոր մեծ լիցքերով տոգորված՝ ճանապարհվեցինք դեպի Թեղենիսի բարձունք տանող Ծաղկաձորի ճոպանուղի, որը քաղաքի գլխավոր այցեքարտերից է: Ճոպանուղին Թեղենիսի բարձունք է հասնում 40 րոպեում: Այն զգացողությունը, որ ապրեցինք՝ պարզապես անհնար է նկարագրել:



Այնուհետև գնացինք «Արի տուն» ճամբար: Աշխարհի ավելի քան 30 երկրներից ժամանած հայ պատանիների հետ մանկացանք մի պահ, պարեցինք, երգեցինք ու ինչո՞ւ չէ, նաև հուզվեցինք նրանց հայրենաշունչ ու հայրենաբաղձ կատարումներից: Հպարտություն ապրեցինք արցախցի դպրոցականների, մանավանդ Անդրանիկ Վերդյանի և Մարիանա Բաղունցի ելույթներից:



Ուշ երեկո էր, երբ հասանք քաղաքամայր Երևան, ուր մեզ արդեն վաղուց սպասում էր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ամենակազմը՝ տնօրեն Աշոտ Բլեյանի գլխավորությամբ: Նման հագեցած օրվա գիշերվան, թվում է, խումբը պետք է մեծ անհամբերությամբ սպասեր, բայց մինչ առավոտ, խմբից և ոչ մեկը չէր կարողանում քնել. կրկին ծանոթություն իրար հետ, օրվա վերլուծություն և այլն:

Հաջորդ օրն այցելեցինք Սարդարապատի հուշահամալիր և Էջմիածնի մայր տաճար: Կրթահամալիրի դասավանդող Մարթա Ասատրյանի գլխավորությամբ խումբը նախ եղավ Էջմիածնում, այնուհետև՝ Սարդարապատում:

Ներկաներից շատերն առաջին անգամ էին տեսնում ճակատամարտի տեղում կառուցված բացառիկ հուշահամալիրը (ճարտարապետ՝ ծնունդով արցախցի Ռաֆայել Իսրայելյան) և մեծ հոգեկան բավականություն ստացան: Անկրկնելի են թևավոր ցուլերը և վեհաքանչ հաղթական զանգերը: Դրանք կարծես պատրաստ են զանգահարելու և ոտքի հանելու ժողովրդին վտանգի պահին: Այդպես է եղել այն դաժան կռվի օրերին. զանգերը վեց օր շարունակ դողանջում էին՝ ժողովրդին հանելով ազատագրական պատերազմի: Հուշահամալիրի անբաժանելի մաս է կազմում ազգագրական թանգարանը, որը ցուցանում էր պարունակում հայ ժողովրդի պատմության վաղնջական, անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը: Թանգարանի բարեխիղճ աշխատակցուհին ոչ մի մանրուք բաց չթողեց, ամեն ինչի մասին ներկայացրեց գիտականորեն, հյուսիս լեզվով և մեծ սիրով:

Չնայած օրվա ծանրաբեռնվածությանը, ներկաներից ոչ մեկի աչքերում հոգնածության ճշույլ անգամ չէր նկատվում. բոլորիս մոտ իշխում էր բարձր տրամադրությունն ու լիարժեք հանգստի վայելումը, ուստի այդ օրվա ուշ երեկոն էլ որոշեցինք անցկացնել Մայր Երևանի գրկում՝ վայելելով գիշերային Երևանն իր հիասքանչ երգող ու պարող շատրվաներով, Հյուսիսային պողոտայով, Կասկադով...
Հաջորդ օրը եղանք Մեծամորի հնագիտական թանգարանում, որտեղ տեսանք Հայաստանի և հայերի՝ մարդկության առաջին բնօրրանը հավաստող նյութեր: Խմբի անունից գրառում կատարվեց թանգարանի հուշամատյանում:


Այցելեցինք Օշական, Տառնի պուրակ: Այստեղ է գտնվում հայոց գրեթե գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, որը դարձել է համայն հայության սրբազան ուխտատեղին: Այս հրաշագեղ եկեղեցուն ևս մոռված է, ծնկի իջանք Մեծն Մաշտոցի գերեզմանի մոտ, աղոթեցինք նրա սուրբ հոգու համար, հիացանք տառների պուրակով և շտապեցինք Երևան, քանզի մեզ երեկոյան մեծ անակնկալ էր սպասվում. այդ օրը հատուկ հրավերով խումբը մասնակցեց Արամ Խաչատրյան համերգասրահում կազմակերպված «Փերիահայ աշուղներ» համերգ-երեկոյին, որը նախաձեռնել էր ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ Թեհրանի Հայոց թեմի թեմական խորհրդի և Թեհրանի Փերիո կրթասիրաց միության հետ համատեղ: Այն ներկայացրեց Հայաստանի հանրային ռադիոյի «Մայր-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը՝ գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի գլխավորությամբ:

Մեր տրամադրության տակ ընդամենը մեկ օր էր մնացել, և այդ օրը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում մասնակցեցինք պարի ուսուցման, «Էկոտորի» և «Դիջիթեք» պարապմունքների: Կրթահամալիրի մասին կցանկանայի մի քիչ ավելի մանրամասն ներկայացնել, քանզի այն իր գործելաճով, միտ ու կացով, ուսումնական պարապմունքների մատուցման եղանակով միանգամայն տարբերվում է սովորական դպրոցից: Այստեղ ամեն ինչ առաջին ու լուսավոր դասասենյակներ՝ առանց ավելորդ ճնշող պատերի, ծաղիկների մի հրաշագեղ աշխարհ՝ աճեցված աշակերտների կողմից, կար ու ձևի սենյակ, որտեղ աշակերտները կարում են և իրենց արտադրանքը հանում վաճառքի: Անգամ դասասենյակների, միջանցքների ջահերը պատրաստված են ոչ պետքական իրերից, որոնք աշակերտների ջանքերով ներկվել, հղկվել ու շատ յուրահատուկ տեսք են ստացել: Շատ հետաքրքիր են ջարդված ծաղկամաններում աճեցված փաթեթային ծաղիկները, որոնք ցանկալի կլիներ տեսնել մեր դպրոցներում: Տպավորիչ է այն սերն ու հարգանքը, որ աշակերտները տածում են ուսուցիչների, դպրոցի հանդեպ: Ու այդ ամենն՝ առանց ավելորդ բառերի:

Վերադարձանք դարձյալ Սևանով, կրկին վայելեցինք Գեղամա գեղեցկուհու հմայքը, կարճատև, բայց լիարժեք հանգիստ վայելած վերադարձանք Արցախ:

Լիա ՂԱՍՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ



Կյանքի 85-րդ տարում իր մահկանացուն կնքեց բազմավաստակ մանկավարժ Ստյոպա Իսկենդերի Հովհաննիսյանը:

Ծնվել է 1930թ. փետրվարի 10-ին, Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Տեղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Հաղորտու միջնակարգ դպրոցում:

Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտն ավարտելուց հետո 1952թ. Ս.Հովհաննիսյանն աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ, աշխատանքին զուգընթաց հեռակա կարգով սովորելով Երևանի պետական մանկավարժական ինստիտուտում:

1952-ից մինչև 1996թ. աշխատել է հարազատ գյուղի դպրոցում և իրեն անմնացորդ նվիրաբերել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին:

Կոլխոզաշենի միջնակարգ դպրոցի հիմնասյուներից մեկն է եղել նա: Երկար տարիներ ղեկավարել է դպրոցի մանկավարժական կոլեկտիվը և իր մանկավարժական հարուստ փորձը փոխանցել երիտասարդներին:

Նա եղել է սիրող ամուսին և հոգատար հայր: Ուսուցչուհի կնոջ՝ Մարո Գասպարյանի հետ միասին մեծացրել և դաստիարակել է հինգ զավակներին:

Մանկավարժական աշխատանքը թողնելուց հետո նա շարունակում էր իր ակտիվ մասնակցությունը բերել գյուղի հասարակական կյանքին, որի հոգսերով ապրել է իր ամբողջ գիտակցական կյանքը:

Ս.Հովհաննիսյանի հիշատակը դեռ երկար տարիներ կմնա նրա բազմաթիվ սաների ու նրան ճանաչողների սրտերում:

Կոլխոզաշենի Հր.Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խոր վիշտ է ապրում ավագ գործընկերոջ՝ վաստակաշատ մանկավարժ Ստյոպա Հովհաննիսյանի մահվան կապակցությամբ և ցավակցում բոլոր հարազատներին:

Կոլխոզաշենի Հր.Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՅԼԱԶԱՆ

ԱՐՃԱՆՑԻ ՈՒՍՈՒՋՈՒՄՈՒ ԿԱԶՄԱԾ զՐՔԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆՂԱԿ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ստեփանակերտի և Արվյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Սարունյանը կազմել է հրատարակել է հայ դասականներին նվիրված գրքեր, որոնք, որպես օժանդակ ձեռնարկներ, օգտակար կարող են լինել ուսուցիչներին՝ տվյալ հեղինակներն ուսուցանելիս: Ահա թե ինչ կարծիք են հայտնել մասնագետները:

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Լույս են տեսել Անուշ Սարունյանի կազմած գրքերը՝ նվիրված հայ գրականության դասականներ հաջատուր Արվյանին, Ավետիք Իսահակյանին, Եղիշե Զարենցին, Պարույր Սևակին, Վահան Տերյանին, Գովհարյան Թումանյանին, Ալեսի Բակունցին: Այս շարքը նա մտադիր է շարունակել և նույն սկզբունքով գրքեր նվիրել հայ մյուս դասականներին, որոնք ծրագրային հեղինակներ են հանրակրթական հիմնական և ավագ դպրոցներում: Դասավանդելով Ստեփանակերտի դպրոցներից մեկում՝ նա շատ լավ գիտի դպրոցը, նրա պահանջները և ըստ այդմ էլ կազմել է այդ գրքերը: Այստեղ ընթերցողը կգտնի գրողի կյանքին և ստեղծագործությանը նվիրված բազմաթիվ լրացուցիչ և ընդարձակ տվյալներ, որոնք չէին կարող տեղ գտնել դասագրքերում: Անուշ Սարունյանը նյութեր է հավաքել մանուկից, հիշողությունների գրքերից, մեծագրություններից, գրողների ոչ միայն գեղարվեստական երկերից, այլև հոդվածներից և օրագրերից: Այդ ամենը ներկայացված է համակարգված ձևով: Կան գրողից բերած ասույթներ, գրողին նվիրված գեղարվեստական երկեր: Սրանք հանրագիտական բնույթի հրատարակություններ են, ինչի պահանջը դպրոցն ունի: Անուշ Սարունյանի կազմած գրքերը որպես ուսուցիչ լրացուցիչ ձեռնարկներ դպրոցներում կարելի է երաշխավորել օգտագործման:

Ձանադրությամբ և հետևողականությամբ: Գրքերն օգտակար են և, անշուշտ, կնպաստի միջին դպրոցում «Գրականություն» և ավագ դպրոցում «Հայ գրականություն» առարկաների ուսուցման արդյունքում:



ն ա - վ է -

ու ու լ թ յ ա ն բարձրացմանը, ինչպես նաև՝ պարունակած բազմաբնույթ ու բազմաբովանդակ նյութերի շնորհիվ՝ աշակերտության ընթերցասիրության զարգացմանը: Անուշ Սարունյանի կազմած գրքերը պարունակում են գրողի կյանքին ու գրական գործունեությանը վերաբերող հարուստ փաստավավերագրական տեղեկություններ, լուսանկարների վերատպույթումներ, գրչակից ընկերների, հարազատների հուշեր և այլ նյութեր: Այն կարող է հաջողությամբ օգտագործվել դասերի, արտադասարանական միջոցառումների ժամանակ և ծառայել պարզապես որպես հետաքրքիր ընթերցանության աղբյուր հայ գրա-

կանության պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՆՎԵՐ ՎԻՐՎԱԲՅԱԼ

ՀՀ ԿԳՆ ԿԱԻ հայագիտական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետ

Անուշ Սարունյանի կողմից փորձաքննության է ներկայացվել «Խաչատուր Աբովյան», «Եղիշե Զարենց», «Ավետիք Իսահակյան», «Պարույր Սևակ», «Վահան Տերյան», «Գովհարյան Թումանյան» գրքերը: Գրքերում տեղ են գտել վերոհիշյալ հայ դասական հեղինակների կյանքին, գործունեությանը վերաբերող բազմազան ու բազմաբնույթ նյութեր: Գրքերը կազմելիս Ա. Սարունյանը նկատի է ունեցել հանրակրթական դպրոցի ծրագրերում ընդգրկված հեղինակներին և այնտեղ ընդգրկել տվյալ հեղինակների կենսագրություններին (ծնողներին, կեղծանուններին պատմությանը, ժառանգներին, կյանքի ուրախ և տխուր պահերին և այլն) վերաբերող հետաքրքիր, ճանաչողական նյութեր: Գրքերում տեղ են գտել նաև տարբեր գրականագետների հոդվածներ, բազմաթիվ հատվածներ գրականագիտական մեծագրություններից: Անուշ Սարունյանի կողմից փորձաքննության ներկայացված գրքերը, որպես ուսումնական գրականություն, կարող են օգտակար լինել հայոց լեզվի և գրականության ուսուցիչների, ավագ դպրոցի սովորողների և գրականությանը հետաքրքրվողներին լայն շրջանակի համար:

Ն. ՏՈՂԱՆՅԱՆ

ՀՀ ԿԳՆ ԿԱԻ գլխավոր մասնագետ, մանկ. գիտ. թեկնածու

Ելնելով փորձագիտական եզրակացությունից՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը 2014թ. օգոստոսի 8-ին հրաման է ստորագրել, համաձայն որի՝

«Եղիշե Զարենց», «Խաչատուր Աբովյան», «Պարույր Սևակ», «Ավետիք Իսահակյան» (հեղինակ՝ Ա. Սարունյան) գրքերը երաշխավորել որպես ուսումնաօժանդակ գրականություն՝ մինչև 2017 թվականը:

ՔԱՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ

Արցախի որ անկյունն էլ այցելես, թո պատմությունից նոր էջեր կբացես: Պատմությունը խոսում է փաստերով. դա կարող է խաչքար լինել, վիմագիր արձանագրություն, թե հազարամյակների վաղեմություն հիշեցնող միջնաբերդ, քաղաքի պարիսպ կամ եկեղեցի: Կարևոր չէ, սակայն, այդ հուշարձանը բնության փոփոխությունների հետ կապված է հայտնվել ստորերկրյա թագավորությունում, թե՛ մեր «հավատարիմ ու բարեկամ» հարևաններն են խնամքով «թաղել»՝ հետագա դարերին պահ տալու համար:

Արցախը հնությունների ու հուշարձանների թանգարան է՝ իր գիրկը կանչող ու տպավորող:

Վերջերս Արցախի ժողովրդավարական կուսակցության Ասկերանի շրջանի տարածքային միավորման նախագահ Սլավա Առուշանյանի նախաձեռնությամբ շրջանի վեներան ուսուցիչների համար էքսկուրսիա էր կազմակերպվել դեպի Տիգրանակերտ՝ հայոց արքա

Տիգրան Բ Մեծի կողմից Արցախում հիմնած քաղաքի թաղամասերից մեկը, որտեղ 2006 թվականից ի վեր ընդարձակ հնագիտական պեղումներ են իրականացվում: Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջի վրա տարածված և Արքայական աղբյուր-



ների (Շահբուլաղ) հարևանությամբ գտնվող հուշարձանը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հայերիս, այլև օտարագրիների համար: Արշավախմբի աշխատանքները ղեկավարում է Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի

վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, որն էլ մեզ մանրամասնեց Միջնաբերդի կառուցման առնչվող հայկական ճարտարապետության դրսևորումները, հետազոտության արդյունքները:

Քայլում են Միջնաբերդը եզերող պարիսպ-հենապատերի երկայնքով, ու արմանք-գարմանքը պարունակում է թեզ. տեսնես ինչպես են այս հսկա քարերը հայտնվել այդ բարձունքին և մարդ-արարչի ձեռքով հղկվել ու հավերժական վկաներ դարձել ստեղծագործ մի ժողովրդի, որի բոլոր բոլոր քարեղեն վկայությունները փաստում են մի բան. հայրերք ուրիշի ունեցվածքին աչք չի նետել, ընդհակառակը, ինչ որ կառուցել է, լույս պաշտպանական բովանդակություն են ունեցել:

Հաղթահարում էինք զարմանահարաշ բարձունքը և հոգնածություն չէինք զգում: Իսկ երբ հասնեք գագաթին, Արցախի տիրա-

կալի պես վերևից վայելեցինք մեր փոքրիկ աշխարհի՝ մեզ համար, սակայն, անսահման լայնատարած բնական գորգը՝ երանգավառ ելևէջներով:

Չես էլ զարմանում, թե արծիվն ինչու է սիրում անսահման բարձունքները. մենք՝ հայերս էլ, արծիվի կենցաղն ունենք. սիրում ենք կյանքից ավելի թանկ ազատությունը:

Տիրական բարձունքից իջնելով՝ եղանք նաև հետախուզական պեղումների արդյունքում հայտնաբերված ու մասնակի պեղված քաղաքի անտիկ առաջին թաղամասում, անտիկ կարասային դամբարանադաշտերից մեկում, ժայռափոր հնձանում, Արքայական աղբյուրներից կից ջրավազանում, թանգարանում:

Արցախի Տիգրանակերտի հետազոտական աշխատանքները դեռևս չեն ավարտվել. Հայոց հողի ընդերքը դեռ շատ բան ունի ասելու աշխարհին. Հայոց հողի մատուցող դեռ շատ էջեր ունի չբացված ու չբացահայտված:

Ոգևորված ու տպավորված մեր անցյալի հիշատակներով՝ բոլորս վերադարձանք՝ հայտնելով մեր երախտագիտությունը նման ձեռնարկի համար:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ԼՂՀ շրջանների ներքինիչալ դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մարտակերտի շրջան

1. Ծանկաթաղի մ/դ - հայոց լեզու և գրականություն՝ 10 ժամ, ռուսաց լեզու՝ 26 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, տեխնոլոգիա՝ 10 ժամ
2. Մեծշենի մ/դ - ինֆորմատիկա՝ 6 ժամ
3. Պողոսագոմերի մ/դ - ֆիզկուլտուրա՝ 12 ժամ, ֆիզիկա՝ 8 ժամ
4. Չլդրանի մ/դ - ՆԶՊ՝ 1 հաստիք + քաղ. պաշտպանության շտաբի պետ՝ 0,5 հաստիք

Ասկերանի շրջան

1. Խանցքի հ/դ - մաթեմատիկա՝ 20 ժամ
2. Բերքածորի հ/դ - քիմիա-կենսաբանություն՝ 11 ժամ
3. Խրամորթի միջնակարգ դպրոցի Փառուխի և Արմենակավանի մասնաճյուղեր - մաթեմատիկա, ֆիզիկա՝ 16 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. թիվ 25-26-ում, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. թիվ 23-24-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի ամուսնով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ից 26-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

ԼՈՒՍԱՐԱՐ
 ԽՄԲԱԳԻՐ՝
 Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ,
 Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
 E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 08.09.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: